ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՔԱԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 33 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Արցախյան ազատագրական շարժումը 1991-1994 թթ.»

ԿԱՏԱՐՈՂ՝ Արտաշես Ասոյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Թադևոսյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն……...…....3
ԳԼՈՒԽ I.ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ: «ՕՂԱԿ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒՄԸ
……..……...….10
1.1*«ՕՂԱԿ» ռազմագործողությունը և հայ բնակչության բռնի տեղահանումը*…...…18
1.2 *Հայ բնակչության բռնի տեղահանումը*……21
ԳԼՈՒԽ II. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992Թ ՀՈՒՆԻՍ-1993Թ ՄԱՐՏ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՎ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԻ ԶԱՎԹՈՒՄԸ
2.1 *Կազմակերպչական աշխատանքները և Ստեփանակերտին հարակից ադրբեջանական կրակակետերի ոչնչացումը*……..24
2.2 *Կրկժանի ազատագրումը*……..……..25
2.3*Քարինտակի հերոսամարտը*…….…….....26
2.4*Իվանյանի (Խոջալու) ազատագրումը*….....27
2.5*Հարսանիք լեռներում ռազմական գործողությունը և Շուշիի ազատագրումը*….....28
2.6*Ասկերանի ռազմական գործողությունը*…….....34
2.7*Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերը 1992թ հունիսից -1993թ մարտ*……..……....37
ԳԼՈՒԽ III. ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1993Թ ԴԵԿՏԵՄԲԵՐ-1994Թ ՄԱՅԻՍ ԵՎ ԲԻՇՔԵԿԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ԿՆՔՈՒՄԸ
3.1*Քարվաճառի (Քելբաջար) ազատագրում*…….…….....……..……....42
3.2*Ակնայի (Աղդամ) ազատագրում*……..……...45
3.3*Վարանդայի (Ֆիզուլի)) Ջրականի (Ջաբրաիլ) և Սանասարի (Կուբաթլու) ազատագրումը*……...……48
3.4*Օմարի ազատագրում*…….……..…53
3.5.*Բիշքեկի զինադադարի կնքումը*……55
Գլուխ IV. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ
4.1 *Թեմայի դասավանդումը* դպրոցում.....59
Եզրակացություն……..……..……65
Օգրագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ…….…67

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն: 1920- ականներից սկիզբ առած Արցախյան շարժումը, ազգային ոգու զարթունք էր, որը նոր թափ ստացավ 1998թ սկզբներին: Արցախյան շարժումը մեր պատմությամ մեջ բացեց նոր էջ, այն հանգեցրեց ազգային ինքնագիտակցության դրսևորման գաղափարական և հոգևոր վերելքին: Արցախյան շարժման նոր փուլը համընկնում է Գորբաչովի կատարած «Վերակառուցման» քաղաքականության տարիների հետ, որը սկսվեց 1985թ- ին:

Այդ «Վերակառուցման» ընթացքում ազգային հարցին յուրահատուկ արժեք տրվեց և այն առաջին պլան մղվեց Արցախում, որտեղ մարզի բնակիչները ոտքի էին ելել ու բողոքում էր Ադրբեջանի կատարած բռնությունների դեմ:

Ղարաբաղյան շարժման և, ընդհանուր առմամբ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի ուշագրավ և ամենակարևոն առանձնահատկություններից էր այն, որ ստանում է համազգային պայքարի բնույթ:

Մեր կատարած աշխատանքը և հետազոտությունները արդիակն են, որովհետև հակառակորդ Ադրբեջանի հակաքարոզչությունը, ինչպես նաև հակամարտության մինչև մեր օրերը դեռևս չլուծված պայմաններում ժամանակի հրամայականներում, լրացնել հայոց պատմության և հայ պատմագրության բաց թողնված էջերը:

Թեման շարադրելիս նպատակ ենք ունեցել ներկայացնել ոչ միայն Արցախահայության վիճակը, այլ նաև նրանց հազարամյակներ ձգվող ազատագրական ոգին:

Մեր աշխատանքում անդրադարձել են 1920- ական թվականներին Ադրբեջանի վարած հակահայ քաղաքականությանը, 1988թ-ին սկսված Արցախյան գոյապայքարին, Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակմանը և թեմայի դասավանդման մեթոդիկային:

Թեմայի նպատակը և խնդիրները: Մեր թեմայի գլխավոր նպատակն է ներկայացնել հայ ժողովրդի մասնակցությունը Արցախի ազգային-ազատագրական պայքարին:

Աշխատանքի ժամանակագրական շրջանակները: Ժամանակագրական առումով աշխատանքը ընդգրկում է 1988թ-ի փետրվարից մինչև 1994թ-ի մայիսն ընկած ժամանակահատվածը:

Հետազոտության մեթոդները: Աշխատանքը գրվել է թեմայի վերաբերյալ տարբեր գրքերի, հոդվածների, փաստաթղթերի, մամուլում տեղ գտած նյութերի, ժողովածուների հիման վրա օգտագործելով պատմահամեմատական պատմաքննական նկարագրական մեթոդներ:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ: «ՕՂԱԿ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒՄԸ

1.1 *«ՕՂԱԿ» ռազմագործողությունը*

1991 թ. մարտի 17-ին Ադրբեջանը մասնակցեց ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարի որոշմամբ (1990 թ. դեկտեմբերի 24) նշանակված հանրաքվեին, որտեղ պետք է որոշվեր Միության պահպանման հարցը: Ըստ արդյունքների՝ Ադրբեջանում (բացառյալ Նախիջևանը) մասնակցության աստիճանը կազմել էր 75.1 տոկոս, որից 93.3 տոկոսը կողմ էր քվեարկել նորացված Միության պահպանմանը: Հայաստանը բոյկոտեց հանրաքվեն: 1990-1991 թթ. հատվածում Մոսկվայի հանդեպ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարության որդեգրած քաղաքականությունների տարբերությամբ է բացատրվում Ղարաբաղի հարցում ռուսական կողմի մոտեցումը և «Օղակ» («Կոլցո») գործողության կյանքի կոչումը: Այսպիսով, ուսումնասիրելով պատերազմի առաջին շրջանը՝ կարելի է արձանագրել, որ թեպետ համակարգված հայեցակարգային կամ փաստաթղթային որևէ ամրագրում այդ շրջանի ադրբեջանական գործողությունները չունեն, որին հնարավոր է հղում կատարել, այնուամենայնիվ, դեպքերը վերլուծելով՝ հստակ է դառնում այն եզրահանգումը, որ հակամարտության այս պարբերաշրջանում թշնամու նպատակն էր մշտական ճնշումների, պարբերական հարձակումների և զինաթափումների, շրջափակման և կոմունիկացիոն ահաբեկչության միջոցով խափանել ԼՂԻՄ հայության ինքնորոշումը[1]:

«Օղակ» գործողության իրականացմամբ սկսվում է հակամարտության շրջանը: Ադրբեջանի մարտավարությունն այս շրջանում նկատելի փոփոխություն ապրեց,

[1] Տե՛ս Հասրաթյան Ս., Գոյամարտ, ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ակնարկ., Ստեփանակերտ, 1988 էջ 7:

այն է՝ Արցախից հայերի դուրսքշման միջոցով հօգուտ իրեն լուծել հարցը: Փաստացիորեն ցեղասպանական այս գործողությունը տևեց ընդուպ մինչև օգոստոս: Ապրիլի 16-ից դադարեցվեց Շահումյանի շրջանի էներգամատակարարումը, անջատվեց հեռախոսակապը: Ապրիլի 19-ին Գետաշեն գյուղում տեղակայված ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի անձնակազմը դուրս բերվեց գյուղից: Ապրիլի 21-ին Բաքվի պահանջով արգելվեցին Երևանից-Շահումյան կանոնավոր ուղղաթիռային չվերթները: Ապրիլի 30-ին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի զանգվածային գնդակոծությամբ սկսվեց «Կոլցո» գործողությունը, որի ժամանակ խաղաղ բնակչության դեմ առաջին անգամ օգտագործվեցին տանկեր, մարտական ուղղաթիռներ, հրետանի[2]:

Հայկական գյուղերը հերթականությամբ օղակի մեջ էին առնվում ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի և խորհրդային բանակի կողմից: Այնուհետև ադրբեջանական ՕՄՕՆ-ն ու միլիցիան մտնում էին նշված գյուղերը՝ պաշտոնապես իբրև թե «անձնագրային ռեժիմի ստուգման», իսկ իրականում՝ հայ բնակչության սպանության, կողոպուտի, ահաբեկության և դրանց հաջորդող տեղահանության նպատակով[3]:

Ապրիլի 30-ից մայիսի-8-ը տեղահանվեցին վարչականորեն Խանլարի շրջանում գտնվող Գետաշեն և Մարտունաշեն գյուղերը, մայիսի 13-16-ը՝ Հադրութի շրջանի Ջրաբերդ, Քարինգ, Առաքյուլ, Բանաձոր, Կարմրաքար, Սարալանջ, Արևշատ, Քարագլուխ, Մյուլքադար, Պետրոսաշեն, Ծամձոր, Ցոր, Խանձաձոր, Շուշիի շրջանի Եղցահող, Ծաղկաձոր, Հինշեն գյուղերը, հուլիսի 6-ից օգոստոսի 19-ը՝ Շահումյանի շրջանի Էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ գյուղերը[4]: «Օղակի» ընթացքում բնակավայրերը պաշարելու և զինաթափելու «սև գործը» հիմնականում իրականացնում էին ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության ներքին զորքերը և ԶՈՒ տարբեր ստորաբաժանումները (այդ թվում՝ զրահատեխնիկա և օդուժ)՝ բաղկացած հիմնականում էթնիկ ռուսներից և ուկրաինացիներից, իսկ ադրբեջանցի օմօնականները ներխուժում, ավերում և թալանում էին բնակավայրերը, բռնաբարում, սպանում և տեղահանում բնակիչներին: «Օղակ» գործողության ընթացքում

---

[2] Տե՛ս Արցախի Հանրապետություն արտաքին գործերի նախարարության կայք էջ: http://www.nkr.am/hy/operation-ring

[3] «Կոլցո» գործողության մասին են վկայում բազմաթիվ փաստաթղթեր, որոնց թվում են ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեի եզրակացությունը և Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ լեդի Քերոլայն Քոքսի գլխավորած՝ Անդրեյ Սախարովի հիշատակի առաջին միջազգային կոնգրեսի փորձագիտական խմբի զեկույցը:

[4] Տե՛ս Հասրաթյան Ս., Գոյամարտ, ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ակնարկ., Ստեփանակերտ, 1988 էջ 9-11:

ընդհանուր թվով հայաթափվեց 23 հայկական գյուղ: Չնայած շոշափելի կորուստներին՝ «Օղակ» գործողությունը նպաստեց, որ հայկական ինքնապաշտպանական ուժերը գործեն ավելի կազմակերպված, համախմբվեն միասնական ռազմական օրակարգի շուրջ և ստանան առաջին մարտական մկրտությունը: «Օղակի» ավարտը և Ղարաբաղում իրադրության նորովի զարգացումը կախված էին ռուսական գործոնի ազդեցության փոփոխությամբ: 1991 թ. օգոստոսի 18-21-ին Մոսկվայում պետական հեղաշրջման և նոր միութենական պայմանագրի տապալումը փաստացիորեն ազդարարեցին ԽՍՀՄ գոյության աստիճանական դադարումը: Դա զգացվեց նաև երկրաքաղաքական առումով կայսրության ծայրամաս հանդիսացող Ղարաբաղում, որտեղ խորհրդային զորքերը սեպտեմբերից սկսած գրեթե դադարեցին մասնակցություն ունենալ ռազմական գործողություններին: Հեղաշրջման անհաջող փորձից հետո Լեռնային Ղարաբաղից հեռացել էր նաև հանրապետական կազմկոմիտեի ղեկավար Պոլյանիչկոն:

Արմատապես փոխվեց նաև քաղաքական կացությունը. Ադրբեջանը, որտեղ Այազ Մութալիբովը հավանություն էր տվել պետական հեղաշրջմանը, վերջինիս պարտությունից հետո ընդունեց հռչակագիր Ադրբեջանական Հանրապետության պետական ինքնիշխանության վերականգնման մասին և որոշում՝ այդ հռչակագիրն ընդունելու մասին: Եվս երեք օր անց՝ սեպտեմբերի 2-ին, ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային ժողովրդական լիազոր ներկայացուցիչների համատեղ նստաշրջանը որոշում կայացրեց ընդունել հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման մասին: ԼՂԻՄ հարակից գյուղերից հայ ազգաբնակչության «դուրս մղումը» շատ ավելի վաղ էր սկսվել: Մասնավորապես, 1989-1990 թթ. Հյուսիսային Արցախի երեք գյուղերի (Կուշչի Արմավիր, Ազատ, Կամո) բնակիչներն իրենց դեմ չդադարող զինված հարձակումների, շրջանային իշխանության մարմինների ճնշումների պատճառով ստիպված էին լքել իրենց բնակավայրերը:

1.2 *Հայ բնակչության բռնի տեղահանումը*

1991 թ. սկզբից Ադրբեջանում գրեթե բացահայտ, ամենաբարձր մակարդակով պարբերաբար սկսեցին հնչեցնել այն միտքը, որ հայերը պետք է հեռացվեն Ղարաբաղից, եթե նրանք համաձայն չեն ենթարկվել Ադրբեջանին: Դեռևս 1991 թ. փետրվարի սկզբին Ադրբեջանի Կոմկուսի երկրորդ քարտուղար, «Լեռնային Ղարաբաղի հարցերով կազմկոմիտեի» ղեկավար Վ. Պոլյանիչկոն, ելույթ ունենալով

Բաքվում, հայտարարեց. «1991 թ. կհայտարարվի Ղարաբաղի տարի: Այս տարին կլինի Ադրբեջանի դժվարությունների վերջին տարին: Ղարաբաղի հողը մեր հողն է, և մենք պետք է գրավենք այն մեր երեխաների համար»: 1991 թ. մարտի 14-ին Եվրախորհրդարանն ընդունեց բանաձև, որում հատուկ ընդգծվում է հայ փախստականների աղետալի դրությունը և կոչ արվում ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ դադարեցնելու ինչպես Հայաստանի ու Ղարաբաղի շրջափակումը, այնպես էլ կանխամտածված և բռնի տեղահանության ենթարկվող Ղարաբաղի ու հարակից հայկական անկլավների հայ բնակչության անվտանգության նկատմամբ ոտնձգությունները: Հայկական գյուղերը հերթականությամբ օղակի մեջ էին առնվում ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի և խորհրդային բանակի կողմից: Այնուհետև ադրբեջանական ՕՄՕՆ-ն ու միլիցիան մտնում էին նշված գյուղերը՝ պաշտոնապես իբրև թե «անձնագրային ռեժիմի ստուգման», իսկ իրականում՝ հայ բնակչության սպանության, կողոպուտի, ահաբեկության և դրանց հաջորդող տեղահանության նպատակով: Գործողության արդյունքում ամբողջովին ամայացան ու ավերվեցին Հյուսիսային Արցախի, ինչպես նաև Շահումյանի, Հադրութի և Շուշիի շրջանների ավելի քան երկու տասնյակ գյուղեր, տեղահանվեց գրեթե տաս հազար մարդ, ավելի քան 100-ը սպանվեց, մի քանի հարյուր մարդ պատանդ ընկավ: Նրանցից շատերի ճակատագիրն առայսօր հայտնի չէ: Հյուսիսային Արցախի ողբերգական իրադարձությունների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը պահանջեց հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների արտահերթ համագումար, սակայն Կրեմլը անտեսեց այդ կոչը: 1991 թ. մայիսին ԱՄՆ Սենատը բանաձև ընդունեց, որը դատապարտում էր «հարձակումներն անմեղ երեխաների, կանանց ու տղամարդկանց վրա», «ուժի անխտիր կիրառումը՝ ներառյալ քաղաքացիական տարածքների գնդակոծությունները Հայաստանի արևելյան և հարավային սահմաններում» և կոչ էր անում «վերջ դնել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ ուղղված շրջափակմանը և ուժի կիրառման ու ահաբեկման այլ մեթոդներին»: Ադրբեջանի ղեկավարությունը «Կոլցո» գործողությունը դիտարկում էր որպես Լեռնային Ղարաբաղի մնացած հայկական մասի լայնածավալ տեղահանության սկիզբ: 1991 թ. մայիսի 22-ին, ելույթ ունենալով Մոսկվայում հանրապետության մշտական ներկայացուցչությունում, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի գաղափարախոսության բաժնի պետ Ա. Դաշդամիրովը հայտարարեց. «Մոտ

ժամանակներս անհրաժեշտ կլինի Ղարաբաղից արտաքսել ևս 32 հազար մարդ»: Անդրեյ Սախարովի հիշատակի առաջին միջազգային կոնգրեսի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ Ա. Դաշդամիրովն ու Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը արդարացնում էին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության տեղահանումը և չէին բացառում դրա շարունակությունը: Սակայն օգոստոսյան պուտչի ձախողումը, որից հետո Մոսկվան դադարեց աջակցել Ադրբեջանին, վերջ դրեց տեղահանություններին: Պատմական Արցախը հայաթափելու միջոցով նրա տարածքին վերջնականապես տեր դառնալու գործընթացը հաղթական ավարտին հասցնելու հաջորդ քայլը Լեռնային Ղարաբաղի հայության բնաջնջումն էր: 1991 թ. հունիսին հիմնահատակ կործանվեցին Մարտակերտի և Հադրութի շրջանի 20 ից ավելի հայկական գյուղեր, սպանվեցին ու վիրավորվեցին հարյուրավոր կանայք, երեխաներ, ծերունիներ: Պատանդ տարվեց ավելի քան 700 մարդ, որոնց կտտանքների են ենթարկել Ադրբեջանի բանտերում: Հազարավոր մարդիկ ստիպված լքեցին իրենց պապենական բնօրրանը[5]:

ԳԼՈՒԽ 2. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992Թ ՀՈՒՆԻՍ-1993Թ ՄԱՐՏ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՎ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԻ ԶԱՎԹՈՒՄԸ

2.1 *Ստեփանակերտին հարակից ադրբեջանական կրակակետերի ոչնչացում*

Կազմակերպչական լուրջ աշխատանքներ տանելուց հետո ԼՂՀ-ի ինքնապաշտպանական ուժերը 1992թ հունվարից ձեռնամուղ եղան Ստեփանակերտի քաղաքամերձ ադրբեջանական կրակակետերի ոչնչացմանը: Փետրվարին ԼՂՀ գերագույն խորհուրդը որոշում ընդունեց ինքնապաշտպանական ուժերի մասին և հանձնարարեց զինված ջոկատները դիտել որպես ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր և դրանք համախմբել մեկ միասնական հրամանատարության ներքո: Զինված ուժերի ընդհանուր հրամանատար նշանակվեց Արկադի Տեր- Թադևոսյանը[6]: Կազմակերպվեց ԼՂՀ պաշտպանության խորհուրդ Արթուր Մկրտչյանի գլխավորությամբ: Խորհուրդի կազմի մեջ ընդգրկվեցին Օլեգ Եսայանը, Վիտալի Բալայանը, Սերժ Սարգսյանը, Արկադի Տեր-Թադևոսյանը, Ռոբերտ Քոչարյանը և Արկադի Կարապետյանը: 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ նախարարների խորհրդին (ՆԽ)

[5] Տե՛ս Էլբակյան Է., Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները., Երևան, 2015., էջ 14-17:
[6] Տե՛ս Օհանյան Ս. Հայկական բանակի 20-ամյա տարեգրություն Երևան, 2012., էջ 58:

առընթեր ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ): Հանրապետության ներքին կայունությունը պահպանելու նպատակով ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը որոշեց ՊԿ նախագահ նշանակել Սերժ Սարգսյանին: ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաև կառավարության կազմի հաստատմանը: 1992 թ. մարտին վերջնականապես ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը[7]:

Սկսեց գրվել ազգային բանակի մարտական փայլուն կենսագրությունը որի առաջին էջը դարձավ Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի վերացման ռազմական գործողությունների հաջող իրականացումը[8]: 1992թ հունվարի 11-ին հայկական մարտական ուժերը լուրջ հարված հասցրին Մալիբեյլուին և Ղուշչուլարին, որտեղի կրակակետերից հրետակոծում էին ոչ միայն Ստեփանակերտը այլ նաև Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր:

Ստեփանակերտը հրետակոծվում էր հատկապես Կրկժան թաղամասից, որտեղի կրակակետերը լռեցնելու համար ուղղարկվեցին մի քանի կամավորական ջոկատներ: Հայ մարտիկները փոքրաթիվ ուժերով 1992թ հունվարին 19-20 լիովին ազատագրեցին Կրկժանը: Այդ հաղթանակը կարևոր քաղաքական ու հոգեբանական նշանակություն ունեցավ[9]:

2.2 ***Կրկժանի ազատագրումը***

Ադրբեջանի զինված ստորաբաժանումը շրջափակել էր Ստեփանակերտ-Կրկժան ճանապարհահատվածը և արվարձանից սկսել էր գնդակոծել Ստեփանակերտը: Սամվել Բաբայանը Ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի-Տեր Թադևոսյանի համաձայնությամբ 1992 թվականի հունվարի երկրորդ կեսին կազմակերպվեց Կրկժանի կրակակետերի ճնշման գործողությունը:Նրա ծրագիրը հետևյալն էր վերահսկողության տակ վերցնել Կրկժանին հարող բարձունքները, Կրկժան-Ղայբալի և Կրկժան Քյոսալար ուղեհատվածները անսպասելի հարձակումով անակնկալի բերել հակառակորդին և ոչնչացնել կրակակետերը:

Դիրքային մարտավարական այս ծրագիրը իրագործվեց 1992թ հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը ճնշելով հակառակորդի կրակակետերը վաղ առավոտյան

---

[7] Տե՛ս Մինասյան Է.,Հայոց նորագույն պետականության քառորդ դարը(1991-2017) ԵՊՀ հրատ. Երևան, 2018., էջ 88:

[8] Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն., Երևան, 2013. էջ 150-151:

[9] Նույն տեղում էջ 151:

ազատամարտիկները գրոհով մտան արվարձան: Հակառակորդը առանց լուրջ դիմադրությամբ նահանջեց դեպի Ղայբալի: Կրկժանի կրակակետերի վնասազերծումով կասեցվեցին դրանցից տարբեր տրամաչափի գնդացիրներով և զենքի այլ տեսակներով Ստեփանակերտի գնդակոծությունները[10]:

2.3 ***Քարին տակի հերոսամարտը***

1992թ հունվարին թեժ մարտեր տեղի ունեցան Քարինտակի մատույցներում: Շուշիի բարձունքից ադրբեջանցիները գրոհում էին, բայց ներքևում գտնվող հերոսական գյուղը մնում էր անառիկ: Այդ գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վ. Առուշյանը: Ադրբեջանի ազգային բանակը այդ ուղղությամբ նոր լայնածավալ հարձակում սկսեց 1992թ հունվարի 25-ի լույս 26-ի գիշերը: Քարինտակին օգնության հասավ Շուշիի ինքնապաշտպանական ջոկատները Ս. Հայրյանի գլխավորությամբ: Երբ մինչև ատամները զինված 250 ադրբեջանցիներ զրահամեքենաներով մոտեցան բնակավայրի մատույցներին, գյուղի պաշտպանները ստիպված նահանջեցին առաջավոր դիրքերից[11]:

Ի վերջո ադրբեջանցիները 12 ժամյա ծանր մարտերից հետո պարտություն կրեցին մարտադաշտում թողնելով 74 սպանված ու 70 վիրավոր նահանջեցին:
Քարինտակում հայերի հաղթանակը ահ ու սարսափ առաջացրեց ադրբեջանցիների մոտ: Քարինտակը հետագայում կարևոր հենակետ դարձավ Շուշիի ազատագրմանը[12]:

Ադրբեջանցիները Քարինտակն անվանում էին Դաշալթը, հետագայում՝ «Գանլը դարա», թարգմանաբար՝ արյան կիրճ: Մոտ 700 բնակիչ ունեցող գյուղը գրավելու երեք փորձ է եղել: 1992թ. հունվարի 26-ին վերջին փորձի ընթացքում ադրբեջանական ջոկատները ջախջախվեցին Քարինտակի մոտ՝ Շուշիի ձորում:

2.4 ***Իվանյանի (Խոջալու) ազատագրումը***

Այնուհետև սկսվեց Խոջալուի ռազմական գործողությունները Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր որը փակում էր Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին: ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները 1992 թ փետրվարի 15-ին դիրքավորվելով Խոջալուի արևմտյան մասի երկարությամբ ադրբեջանական

---

[10] Տե՛ս Հաղթանակները ինչպես եղել են. Ազդականչ 44 էջ 23-24:
[11]Տե՛ս Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից 19-20-րդ դարեր, Երևան, 2012., էջ 232,234,236:
[12] Նույն տեղում էջ 151-152:

կողմից պահանջեցին թողնել և հեռանալ: Ի պատասխան ադրբեջանցիները սկսեցին ռմբակոծել Ստեփանակերտը:

Ադրբեջանում ներքին քաղաքական անկայունություն էր տիրում: Ժողովրդական ճակատը փորձելով տապալել Ա. Մութալիբովի իշխանությունը, գործում էր հաշվենկատ ու նպատակասլաց: Նա մտածում էի Խոջալուն հանձնել դրա համար մեղադրել Մութալիբովին ու զրկել իշխանությունից:

Խոջալուի կրակակետերը լռեցնելու համար ԼՂՀ ռազմական ուժերը որոշեցին առաջին հերթին հսկողության տակ վերցնեն օդանավակայանը որտեղ վաղուց իշխում էին հատուկ ջոկատայինները: 1992թ փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայկական ջոկատները Աշոտ Ղուլյանի գլխավորությամբ հասան առաջավոր դիրքերին: Հակառակորդը անակնկալի գալով նահանջեց: Առանց զոհերի հայկական ջոկատները մտան օդանավակայան: Նրանք գլխավոր ճանապարհի կողմից միջանցք էին թողոլ որպեսզի Խոջալուի բնակիչները գնան Աղդամ: Փետրվարի 26-ին մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը տալով 8 զոհ և 20 վիրավոր լիովին ջախջախեցին Խոջալույում տեղակայված ադրբեջանական ուժերին: Ադրբեջանի Ազգային ճակատի կողմից իշխանությունը գրավելու նպատակով կազմակերպվեց եվ իրականացվեց Խոջալույի խաղաղ բնակչության կոտորածը: Իրենց իսկ ձեռքով իրականացրած այդ գործողությունը ադրբեջանական իշխանությունները փորձեցին բարդել մեզ վրա իդեպ այդ գործնթացը մինչ օրս շարունակվում է: Խոջալուն ադրբեջանցիների առաջին խոշոր պարտությունն էր: Հաջորդը Շուշին էր[13]: Պետք է ասեմ որ, 1992 թ ապրիլ մայիս ամիսներին ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում օրհասական վիճակ էր բնակչությունը սովի եզրին էր մայրաքաղաքում չկար հեղուկ վառելիք իսկ մայիսի 1-ից անջատվել էր էլեկտրաէներգիան : Այս հարցերը լուծելու եվ Ստեփանակերտի ու հարակից բնակավայրերի անվտանգությունը ապահովելու համար Շուշին պետք է ազատագրվեր[14]:

2.5 ***Հարսանիք լեռներում ռազմական գործողությունը և Շուշիի ազատագրումը***

Շուշիի ազատագրման պլանը 1992 թ-ի մարտ ապրիլ ամիսներին խիստ գաղտնիության պայմաններում կազմվել է ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանի, Ֆելիքս Գզողլյանի, Սերժ Սարգսյանի,

[13] Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն.,Երևան, 2013., էջ 152-153:

[14] Տե՛ս Օհանյան Ս., . Հայկական բանակի 20-ամյա տարեգրություն Երևան, 2012., էջ 54- 55:

Վազգեն Սարգսյանի, Գուրգեն Դալիբալթայանի, Լեոնիդ Մարտիրոսովի և այլոց գործուն մասնակցությամբ: Այն կազմվել է հետախուզական խմբերի կողմից հակառակորդի ուժերի տեղակայումը, դիրքերն ու քանակական տվյալները վերջնականորեն ճշգրտելուց հետո: Ըստ հետախուզության տվյալների՝ Շուշիում և նրա պաշտպանական թևերում կենտրոնացած էր հակառակորդի մոտ 2500 զինվոր: Այնինչ 40 կմ երկարությամբ ճակատում մենք ունեինք ընդամենը 3500 կամավորական, և դա այն պարագայում, երբ հարձակվող կողմը պաշտպանվող կողմից պետք է ունենա նվազագույնը 3 անգամ շատ անձնակազմ:

Հակառակորդին ջախջախելու միջոցները՝ գրավել բարձունքը և դիրքավորվել այնտեղ: Ուժերի վերախմբավորումից հետո՝ նույն ժամանակում, սկսել հարձակումը Լիսագորի ու Զառսլուի վրա և հարձակման անցնել Շոշի (արևելյան), «26-ի» (հյուսիսային), Լաչինի (հարավային) և Քյոսալարի (հյուսիսարևմտյան) ուղղություններով: Ստեփանակերտի կողմից հակառակորդին ջախջախել բարձունքներում, դիրքավորվել Շուշիի 3 ծայրամասերում, ապա ոչնչացնել թշնամուն և ազատագրել Շուշին»: Ըստ այս մարտական հրամանի՝ Շոշի կամ արևելյան ուղղության հրամանատար է նշանակվել Արկադի Հակոբ Կարապետյանը, «26-ի» կամ հյուսիսային ուղղության հրամանատար՝ Վալերի Չիթչյանը, Լաչինի կամ հարավային ուղղության հրամանատար՝ Սամվել Բաբայանը, Քյոսալարի կամ հյուսիսարևմտյան ուղղության հրամանատար՝ Սեյրան Օհանյանը: Կազմավորվել էին նաև պահեստային ուժեր, որոնք անհրաժեշտության դեպքում պետք է օգնության հասնեին:

Արցախյան կողմը, իրոք, ոչ միայն կենդանի ուժի, այլև զենքի ու զինամթերքի զգալի պակաս էր զգում նման ռիսկային քայլի դիմելու համար: Վերստին անդրադառնանք Կոմանդոսի վկայությանը. «Փաստորեն, 200 հոգի պահեստայիններ սպասում էին իրենց մահացած ընկերների զենքին, որ մարտի դաշտ գնան»: Նրա արտահայտությամբ. «Շուշիի գրավումն արցախցիների կենաց-մահու խնդիրն էր: Այսինքն՝ իմ ենթակաները, իմ հրամանատարները «ստիպեցին» նման որոշում կայացնել: Ես ենթարկվում էի Սերժ Սարգսյանի Պաշտպանության կոմիտեին: Ես նրան հարցրի՝ գրավո՞ւմ ենք, նա ասաց՝ գրավում ենք»[15]:

Հայտնի է, որ Շուշիի ազատագրման ռազմագործողության մշակմանն Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը ձեռնամուխ էր

[15] Հաջյան Միքայել՝ քաղաքական մեկնաբան, Արցախի վաստակավոր լրագրող Արցախ, 2020 մայիս:

եղել դեռևս Խոջալուի ազատագրումից անմիջապես հետո՝ մարտ-ապրիլ ամիսներին՝ հակառակորդի ուժերի տեղակայումը, դիրքերն ու քանակական տվյալները ճշգրտելուց հետո:

Գործողությունն ստացավ «Հարսանիք լեռներում» անվանումը, որի մտահղացումը, ասում են, պատկանում էր այն ժամանակ Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին: Պատմում են, որ երբ գործողությունը ղեկավարող հրամանատարները ներկայացրին քաղաքի ազատագրման մարտական նախագիծը, այն չափազանց համարձակ թվաց: Հենց այն ժամանակ էլ Վազգեն Սարգսյանը հայտարարեց, որ եթե նախագիծը հաջողվի իրականացնել, ապա քաղաքի ազատագրումից հետո ինքն անպայման կամուսնանա:

Շուշիի ազատագրման մարտական գործողությունը պայմանականորեն կրում էր «Հարսանիքը լեռներում» ծածկանունը[16]: 1992 թ. մայիսի 4-ին որոշվեց իրագործել Շուշիի գրավման «Հարսանիք լեռներում» գործողությունը:

Շուշիի ազատագրման մարտական հրամանը ստորագրվել է մայիսի 4-ին, և նախատեսվում էր քաղաքի վրա գրոհել մայիսի 5-ին: Սակայն այդ օրն առատ ձյուն էր տեղացել: Եղանակային պայմանները հրամանատարությանը ստիպեցին գործողությունը մայիսի 8 տեղափոխել: Անսպասելի տեղացած առատ ձյունն իր հերթին, բայց կային նաև այլ էական խոչընդոտներ գրոհը հետաձգելու համար: Սամվել Բաբայանի խոսքով՝ դեռևս կային նախապես լուծման կարոտ խնդիրներ, մասնավորապես՝ զենքի ու զինամթերքի պակաս: «Միայն Շուշիով հարց չէր լուծվում, պետք էր պահել նաև Աղդամի և Մարտակերտի ուղղությունները: Այդ իսկ պատճառով որոշեցինք գործողությունն սկսել միայն այն բանից հետո, երբ կլրացվի զենքի ու զինամթերքի պակասը»: Բացի այդ, ըստ նրա, պետք էր կատարել նաև հետախուզական մի շարք լրացուցիչ ճշտումներ: Մայիսի 8-ի գիշերը՝ 2-ն անց 30-ին, հրետանային կրակի ներքո բոլոր չորս ուղղություններով սկսվեց ընդհանուր գրոհը: Հակառակորդը դիրք էր գրավել Շուշի կամրջից ոչ հեռու: Աշոտ Ղուլյանը վիրավոր էր, բայց մնում էր առաջին գծում:

Առավոտյան ժամը 6-ն անց 30-ին նա Ա. Տեր-Թադևոսյանին հաղորդեց, որ նստած է Շուշիի բերդի պատին և շուտով կմտնի քաղաք[17]: Մայիսի 8-ի կեսօրին

---

[16] Տե՛ս Ասլանյան Հ., Մելիքբեկյան Գ., 08.05.2012, http://www.ysu.am/newspaper/hy/1380605176#.Y8J36FxBzcc:

[17]Տե՛ս Թադևոսյան Ռ.,Դրվագներ հայոց ռազմական պատմությունից 19-20-րդ դարեր., Երևան, 2012., էջ 552-553:

Շուշիի պաշտպանությունը ճեղքված էր հյուսիսից և արևելքից: Քաղաք մտած ջոկատները կռվում էին շուկայի շրջակայքում և կենտրոնական թաղամասերում: Ժամը 18-ին հայ ազատամարտիկներն ազատագրեցին քաղաքի կենտրոնը և ադրբեջանցիների հսկողության տակ թողեցին միայն հարավային հատվածը: Նրանք փողոցային մարտերով մոտենում էին Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցուն, որը թշնամու կողմից վերածվել էր զինապահեստի: Մայիսի 9-ի կեսօրին մարտերը մղվում էին միայն հենակենտրոնի մոտ: Թշնամին դիմեց խուճապահար փախուստի: Շուշիում կռիվների ժամանակ հակառակորդը տվեց 300 զոհ, 600-700 վիրավոր, 13 գերի: Թշնամուց առգրավվեցին կամ ոչնչացվեցին մոտ 10 զրահատեխնիկա, հարյուրավոր հրթիռներ ու արկեր: Հայկական կողմն ունեցավ 70 զոհ և 120 վիրավոր: Երկու օրում թշնամու դիմադրությունը կոտրվեց: Շուշիի ազատագրմամբ և հակառակորդի մյուս կրակակետերի լռեցումով Ստեփանակերտը և հարևան բնակավայրերը շունչ առան:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողություններն ընդունեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի բնույթ, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ ամբողջական ու անշրջելի: Շուշիի ռազմական գործողությունները լուրջ մարտական մկրտություն էին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության տարեգրությունում: Արցախի հինավուրց մայրաքաղաքի ազատագրումն ամրապնդեց հայ ժողովրդի հավատը հաղթանակի հանդեպ, բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որը հետագայում չկարողացավ ազատվել պարտվողի հոգեբանությունից: Խոսելով Շուշիի հաղթանակի կարևորության մասին՝ Ա. Տեր-Թադևոսյանը հպարտությամբ նշում է, որ դա հնարավոր եղավ մեր մարտիկների սխրանքների ու ոգու արիության շնորհիվ[18]:

Մայիսի 8-ի երեկոյան երբ դեռ Շուշիյում չէին լռել կրակոցները, Վազգեն Սարգսյանը հայտարարեց «Այն ինչ կատարվում է Արցախում,հրաշք է…Արցախը պաշտպանում է իրեն բայց կար անվստահության գացում: Իսկ քանի Շուշին կար Արցախում ապրելն անհնարին էր:Ամեն օր տասնյակ խաղաղ բնակիչներ էին սպանվում: Հեքիաթ աղբյուրի գլխին կախված հրեշ էր Շուշին: Կամ պիտի Արցախը կուլ գնար կամ ոչնչացնեինք նրան… Մեր ժողովրդի մի հատվածը այստեղ Արցախում կենաց և

[18]Տե՛ս Մինասյան Է., հայոց նորագույն պետականության քառորդ դարը., 1991-2017., Երևան, 2018., ԵՊՀ հրատ., էջ 91:

մահու կռիվ է տալիս և մենք այստեղ անտարբեր մնալու բարոյական իրավունք չունենք…Պատերազմը առաջին հերթին ոգու պայքար է: Այսօր մեր ոգին կռվում է Մեր ոգին այսօր հաղթում է»[19]:

Անառիկ համարվող քաղաքը չորս կողմից շրջապատված էր սարերով, Շուշին պաշտպանում էր լավ զինված ադրբեջանական կայազորը՝ մոտ 2500 զինվոր ու սպայով: Քաղաքի ազատագրումը սկսվեց մոտ երեք հազար հայ զինվորով: Ռազմական պրակտիկայում ուժերի այդպիսի համադրությունն անհեթեթություն էր, քանի որ նման դեպքերում հարձակվող կողմի անձնակազմն առնվազն երեք անգամ պետք է գերազանցի պաշտպանվող կողմին: Պետք է նշել նաև, որ հայկական կողմը որակյալ ու ժամանակակից զենքի պակաս ուներ:

Գործողության հրամանատարի՝ լեգենդար Արկադի Տեր-Թադևոսյանի հիշողություններով՝ նախատեսվում էր քաղաք մտնել մայիսի 5-ին, սակայն այդ օրը առատ ձյուն էր տեղացել: Եղանակային անոմալիան ստիպեց հայկական հրամանատարությանը՝ գործողությունն իրականացնել մայիսի 8-ին:

Մայիսի 9-ին Շուշին լրիվությամբ ազատագրված էր: Հայ մարտիկի զենքի փառքը վերստին փայլատակեցին իրեն առանձնահատուկ փառահեղությամբ:Իր 273-ամյա պատմության ընթացքում,Շուշիի բերդ-ամրոցը, որը միշտ էլ հայտինի է եղել անառիկությամբ առաջին անգամ անձնատուր եղավ հանուն պատմական արդարության, հանուն տիրոջ սիրո:Երկու օր տևած մարտական այդ փայլունռազմագործողության ընթացքում ակնհայտ դարձավ հայրենիքին ծառայելու կոչված մարդկային արժանապատվության անվիճելի իրողությունը որը ցայտուն կերպով դրսևորվեց Ինքնապաշտպանության ուժերի 1-ին, 4-իդ, 6-րդ, Ակնաղբյուրի, Բալուջայի վաշտերի, հետախույզների և մյուս ստորաբաժանումների սխրագործություններում:

Ազատագրվեց Շուշին՝ հնամյա, տանջահար ու վիրավոր: Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու ավերված գմբեթին ծածանվեց հայոց եռագույնը, և մոմի բույրը բարձրացավ եկեղեցու պատերն ու կամարներն ի վեր[20]:

Շուշիի ազատագրման մարտերում հայկական կողմն ունեցավ 47 զոհ, հակառակորդը՝ 150-200 սպանված, շուրջ 300 վիրավոր, 13 գերի: Ադրբեջանական բանակը Շուշիում թողել էր հրետանային 6 կայանք, մի քանի հազար հրթիռ ու արկ:

---

[19] Արշակյան Ա., - Արցախյան գոյապայքար (1985-1992)., Երևան, 2004 էջ 231:

[20] Տե՛ս Հասրաթյան Ս., Գոյամարտ., ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց ք.Ստեփանակերտ, 1998թ էջ 11:

Շուշիի ազատագրմամբ, սակայն, «Հարսանիքը լեռներում» գործողությունը չավարտվեց: Դրան հաջորդեց Լաչինի մարդասիրական միջանցքի բացման գործողությունը, որով ճեղքվեց ԼՂՀ շրջափակման օղակը, և մայիսի 18ին բացվեց Արցախը Հայաստանին միացնող կյանքի ճանապարհը: Շուշիի ազատագրումը դարձավ մեր հերոսական ազատամարտի հաղթական ավարտի հաղթական մեկնարկը: Լինելով ազատագրական պայքարի առաջին ծաղիկը՝ այն դարձավ նաև հետագա հաղթանակների բանալին: Տարիներն ակնթարթ առ ակնթարթ հեռանում են, սակայն ժամանակի մշուշից վեր են հառնում Շուշիի գործողության մշակմանն ու իրականացմանը մասնակցած բոլոր հերոսները, ովքեր «Հարսանիքը լեռներում» առասպելը կերտեցին[21]:

2.6 ***Ասկերանի ռազմական գործողությունը***

1992 թվականի հունիսի 7-ին Ադրբեջանի Հանրապետությունում կայանալիք նախագահական ընտրություններում նախապատրաստության պատճառով մայիսի վերջին և հունիսի սկզբին հակամարտության գոտում լարվածությունը նվազել էր: Սակայն հակառակորդը հունիսի առաջին կեսին ըստ հետազոտության տվյալների ԼՂՀ սահմանամերձ գոտու երկարությամբ Միրբաշիրի, Կուբաթլուի, Ջաբրայիլի Աղդամի շրջաններում կուտակել էր մեծաքանակ հետևակ զրահատեխնիկա ծանր հրետանի: Սկսած հունիսի 12-ից շուրջ 120 կիլոմետր երկարությամբ հակամարտության գոտու հյուսիս արևելյան արևելյան և հարավարևելյան ուղղություններով հակառակորդն անցավ լայնամաշտաբ հարձակամն, որի հետևանքով ԼՂՀ-ում ստեղծվեց ծանր կացություն[22]:

Մոտավոր հաշվումներով ադրբեջանական կողմից հարձակմանաը մասնակցում էին 150 միավոր զինտեխնիկա մի քանի հազար հետևազոր: Գլխավոր հարվածները ուղղեկով դեպի Ասկերանի, Կիչան-Քոլատակի և Շահումյանի շրջանի հյուսիս-արևելյան հատվածները, Ադրբեջանի ռազմական հրամանատարությունը վճռել էր զրահատեխնիկայի « գրադ» կայանքների հրետանու և ռազմական օդուժի հուժկու հարվածներով կոտրել տակավին կազմավորման գործընթաց ապրող ղարաբաղյան զինուժի դիմադրությունը և մարտադաշտում նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը:Ձեռնարկված հանկարծակի հարձակման հետևանքով Արցախում

[21] Տե՛ս Ասլանյան Հ. , Մելիքբեկյան Գ., 08.05.2012թ., http://www.ysu.am/newspaper/hy/1380605176#.Y8J36FxBzcc:

[22] Տե՛ս Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են Ազդականչ 44., Երևան, 2008., էջ 44:

ստեղծվեց ծանր կացութուն: Շահումյանի շրջանի մեծ մասը, այդ թվում Ղարաչինար, Հայ Բարիս Էրքեջ, Մանաշիդ, Բուզլուխ գյուղերը, հակառակորդը գրավեց: Իրավիճակը չափից ավելի ծանր էր Ասկերանի ուղղությունում: Ձավրելով Նախիջրանիկ Փորջմալ և Աղբուլաղ գյուղերը թշնամին հասավ ընդհուպ Ասկերան շրջկենտրոնի մատույցներին[23]: Նույն դրությունն տիրում էր նաև Կիչան-Նարեշտար-Սրխավենդ ճակատային հատվածում:Ռազմավարական կարևոր նշանակություն ճանապարհը,որը Մարտակերտը կապում էր մայրաքաղաքի հետ հայտնվել էր փակաման վտանգի առաջ: Իսկա դա նշանակում էր Մարտակերտի շրջանի և Շահումյանի շրջանի դեռ չզավթված տարածքների մեկուսացում ինքնապաշտպանության հիմնական ուժերից[24]:

Մայիսի 9-ին ադրբեջանական բանակը լայնամասշտաբ ագրեսիվ գործողություն է ձեռնարկել Ասկերան շրջկենտրոնի եւ շրջանի գյուղերի դեմ՝ գնդակոծելով դրանք «Գրադ» կայանքով, ծանր հրետանիով ու ռմբահարելով 3 «Սու-25»-երից: Ռմբահարման է ենթարկվել նաեւ Ստեփանակերտը: Մայիսի 9-ի երեկոյան «Գրադով» հրետակոծվել են Շահումյան շրջկենտրոնն ու Ղարաչինար գյուղը: Մայիսի 10-ի առավոտյան ադրբեջանական բանակի մի խոշոր զորախումբ գրոհել է Ասկերանի շրջանի հայկական գյուղերի պաշտպանական գիծը: Ադրբեջանական ստորաբաժանումները Աղդամից ներխուժել են հայկական Սառնաղբյուր եւ Դահրազ գյուղեր: Սառնաղբյուրում գազանաբար սպանվել է 6 խաղաղ բնակիչ, 5-ը ստացել ծանր վնասվածքներ: Փոքր-ինչ ուշ հայկական ինքնապաշտպանական ուժերը, համալրում ստանալով, անցել են հակահարձակման եւ ադրբեջանցիներին դուրս շպրտել Սառնաղբյուրից: Մայիսի 12-ի երեկոյան վերսկսվել է հարձակումը Ասկերանի շրջանի Սառնաղբյուր, Դահրազ, Վարազաբուն, Վարդաձոր եւ Նախիջեւանիկ գյուղերի վրա: Գնդակոծման է ենթարկվել Ստեփանակերտի օդանավակայանը: Միաժամանակ սկսվել է զորքերի առաջխաղացումը Աղդամի շրջանի Գյուլափլու գյուղից:

Մարտերը շարունակվել են գիշերը եւ մայիսի 13-ի առավոտյան: Առավելագույն առաջխաղացում է եղել Սառնաղբյուր եւ Դահրազ գյուղերի ուղղությամբ: Սակայն մայիսի 13-ի կեսօրին ադրբեջանցիների գրոհը կասեցվել է:

---

[23] Տե՛ս Հասրաթյան Ս., Գոյամարտ., ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց ք.Ստեփանակերտ, 1998թ էջ 13:

[24] Տե՛ս Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանների Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում., Ստեփանակերտ, 2008., էջ 20:

Ինքնապաշտպանական ուժերը հակահարվածով թշնամուն հետ են շպրտել Ասկերանի շրջանի տարածքից եւ վերահսկում են իրավիճակը[25]:

Այս ծանր կացությունը շտկելու համար Ասկերանի ճակատ գոչծուղվեց Սամվել Բաբայանը:Հետաղուզության և նախօրոք ձեռք բերված տվյալների վերլուծությունից հետո Սամվել Բաբայանը համոզվեց որ ճիշտ մարտավարությամբ կարելի է կանխել Ասկերանի գրավման վտանգը:Բաբայանը նախ վճռեց պաշտպանությունը զարգացնել խորությամբ և ստեղծել պաշտպանական կրկնակի բնագծեր: Այսպիսով ստեղծվեց Ասկերանի ռազմաճակատ, որին էր վերապահվել Ասկերանի և Ստեփանակերտի պաշտպանության առաքելությունը: Ռազմաճակատի պաշտպանական բնագծերն էին Սառնաղբյուր-Նախիջևանիկ, Նախիջևանիկ-Խրամորթ,Քյաթուկի հատվածները:Ծանր մարտեր ընթացան այդ բնագծերում հատկապես 1992թ հունիսի առաջին տասնօրյակին[26]:Ասկերան Աղդամ մայրուղու կենտրոնով տանկի և հետևակի մարտական մեքենայի ուղեկցությամբ հարձակումներ կատարվեց 2-րդ վաշտը, իսկ 5-րդ վաշտն ու Բալուջայի ջոկատը դիրքավորվեցին և հսկեցին Նախիջևանիկի մոտակա բնագծերը: Հակահարձակման նախապատրաստության ժամանակ սակրավորներն ականապատել էին նախապես որոշված հատվածները որով նախադրյալներ ստեղծվեցին հայկական ուժերի հակահարձակման համար: Ինքնապաշտպանության ուժերը համալրվելով նոր ստորաբաժանումներով հակահարձակման անցան մարտագծի բոլոր ուղղություններով: Սակրավորների տեղադրած ականների վրա պայթեց հակառակորդի 20 ծանր տանկ խփվեց մեկ տասնյակից ավելՀՄՄ: Ասկերանի ճակատում պարբերաբար ընթացած մի քանի ամսվա մարտերի արդյունքում ազատագրվեցին Ասկերանի շրջանի բռնազավթած մի շարք բնակավայրեր:

Երբ հարցրել են Սամվել Բաբայանին, թե Ասկերանի ռազմական գործողություններից հետո ինչ եզրահանգման է եկել նա պատասխանել է Ասկերանի ճակատի ճակատի ազատագրական մարտերի ժամանակ ես հասկացա թե ինչպես կկարողանանք ազատագրել Աղդամը: Իսկ որ Աղդամը մենք կկարողանանք ազատագրել ես արդեն որևէ կասկած չունեի[27]:

---

[25]Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարարության հանդես Արցախյան իրապատումներ (Ս.Շաքարյանց, «Զով Արցախա», 1992 թ. մայիս, N5 (39))., http://www.hayzinvor.am/92139.html :

[26] Տե՛ս Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., նշվ. աշխ. էջ45-46:

[27] Նույն տեղում., էջ 46-47:

2.7 *Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերը 1992թ հունիսից -1993թ մարտ*

Հակառակորդի ձեռնարկած լայնամաշտաբ հարձակման հետևանքով Մարտակերտի և Շահումյանի շրջաններում ստեղծվել էր ծանր դրություն:Իրավիճակը կարգավորելու և ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար Մարտակերտ գործուղվեցին Արկադի-Տեր Թադևոսյանը, Արտուշ Հարությունյանը, Սերյան Օհանյանը,Վալերի Չիթչյանը, Հայկազ Բաղմանանը և ուրիշներ: Հակառակորդը ունենալով տեխնիկայի և կենդանի ուժի առավելություն հրի էր մատնել Շահումյանի ոզջ շրջանը, Մարտակերտի շրջանի դաշտային մասը: Վտանգված էր Մարտակերտ քաղաքը որը պարբերաբար հրթիռահրետակոծվում էր ծանր հրետանիյով և գրադ կայանքով[28]:

Հուլիսի 4-ին Ադրբեջանի բանակային կազմավորումները երեք ուղություններով Լենինավանի, Կարմիրավանի և Փափռավենդի կողմից ձեռնարկեցին լայնածավալ հարձակում Մարտակերտ քաղաքի վրա: Հարձակմանը մասնակցում էին հազարավոր հետևակայիններ շուրջ 70 միավոր հրասայլ և այլ զրահատեխնիկա:Հակառակորդի բազմակի գերազանցող ուժերի դեմ անհավասար և կատաղի մարտերից հետո հայկական ինքնապաշտպանության ջոկատները ստիպված էին թողնել Մարտակերտ շրջկենտրոնը և նահանջել դեպի Ներքին Հոռաթաղ գյուղի առավել հարմար դիրքեր: Մարտական գործողությունների ողջ ընթացքումՄարտակերտը ռմբակոծում էր Ադրբեջանական օդուժի «ՍՈՒ-25» ինքնաթիռը: Նույն օրվա գիշերը ադրբեջանական զորամիավորումները Քելբաջարի շրջանից ներխուժելով Մարտակերտի շրջանի իր մեծությամբ երկրորդ բնակավայր Հաթերք գյուղ հրկիզեցին այն:Արդեն հուլիսի 10-ի դրությամբ ռազմաճակատի գիծը անցնում էր Դրմբոն-Գյուլաթաղ հատվածով[29]:

Օգոստոսի երկրորդ կեսին թշնամին շոշափելի հաջողության հասավ Վաղուհաս գյուղի ուղղությամբ: ԼՂՀ ՊԲ հրամանատարությունը Մարտակերտի ուղղությամբ գործող իր զորքերի պաշտպանությունը կայունացնելու նպատակով ձեռնարկեց մի շարք օպերատիվ միջոցառումներ: Ռազմաճակատի հյուսիսային հատված տեղափոխվեցին կենտրոնական պաշտպանական շրջանի երկրորդ եւ երրորդ գումարտակների ուժերը, որոնց առաջ խնդիր դրվեց աջակցել Առաջաձորի եւ

[28] Տե՛ս Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., նշվ. աշխ. 2008., էջ 48:
[29] Տե՛ս Հասրաթյան Ս.,Գոյամարտ, ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց ք.Ստեփանակերտ, 1998թ.,էջ 14:

Վաղուհասի ուղղություններում գործող 5-րդ պաշտպանական շրջանի ուժերին: Հոկտեմբերի կեսերին Լաչինի մարդասիրական միջանցքը դարձավ պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմը: Թշնամին հյուսիսից եւ հարավից արկերի տարափ էր տեղում ՝կյանքի ճանապարհի՞ վրա: Հակառակորդի համար գլխավոր կրակակետ էր դարձել Խծաբերդ գյուղին մերձակա Թոփաղուճ լեռը: Հոկտեմբերի 12-ին ղարաբաղյան ուժերին հաջողվեց ադրբեջանցիներին դուրս մղել այդ բարձունքից: Երկու օր հետո՝ հոկտեմբերի 14-ին, մարտական գործողություններ սկսվեցին միջանցքի հյուսիսում՝ Ղոչազ լեռան ուղղությամբ: Ինքնապաշտպանության ուժերի հաջող մարտավարության շնորհիվ հակառակորդը նահանջեց, թողնելով իր դիրքերը ոչ միայն Ղոչազի, այլեւ Սարի բաբա լեռան եւ հարակից տարածքներում: ՝Կյանքի ճանապարհի՞ անվտանգությունն ապահովեց : Հակառակորդը, չկարողանալով ռազմաճակատում հասնել էական հաջողության, ստիպված ռմբահարում էր հանրապետության խաղաղ բնակավայրերը, այդ թվում նաեւ մայրաքաղաք Ստեփանակերտը[30]:

1992թ. վերջերին եւ 1993թ. սկզբներին ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտու ողջ երկարությամբ տիրում էր հարաբերական անդորը: Դա գլխավորապես պայմանավորված էր նրանով, որ կողմերից յուրաքանչյուրն զբաղված էր հետագա ռազմագործողությունների իրականացման համար նոր ծրագրերի մշակման ու միաժամանակ ուժերի վերախմբավորման եւ համալրման խնդիրներով: 1993թ. հունվարի սկզբներին ադրբեջանական բանակի հեռահար հրետանին վերսկսեց ԼՂՀ մի շարք բնակավայրերի հրետակոծումը Աշխուժացավ նաեւ հետեւակը: Հունվարի 13-14-ը Ադրբեջանը գործողության մեջ դրեց իր ռազմական տեխնիկայի գրեթե ամբողջ զինանոցը՝ գրոհային ինքնաթիռներ, ծանր հրասայլեր, հետեւակի մարտական մեքենաներ: Ռմբակոծվեց Ասկերանի շրջանի Սարդարաշեն եւ Մեհտիշեն գյուղերի տարածքը: Հրթիռահրետակոծության ենթարկվեցին Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի եւ Հադրութի մի շարք բնակավայրեր: Հունվարի 13-ին Մարտունու շրջանի Ճարտար գյուղի ուղղությամբ՝ Ուրյան լեռան մերձակայքում ծավալված թեժ մարտերից հետո հակառակորդի գրոհը կասեցվեց: Երկու օր հետո ադրբեջանական զորամասերը հարձակման անցան հյուսիսային ռազմաճակատում՝ Չլդրան - Սրխավենդ ռազմագոտու ուղղությամբ: Կատաղի

[30]Տե՛ս Արցախի Հանրապետության Պաշտպանության Նախարարություն Պաշտոնական կայք., (ԼՂՀ ՊԲ մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց),:
http://www.nkrmil.am/history-of-defence-army/view/39:

մարտեր ծավալվեցին նաև Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մատույցների շրջանում: Սակայն, ինչպես այստեղ, այնպես էլ մյուս ճակատներում Ադրբեջանի զինված ուժերին չհաջողվեց շոշափելի հարված հասցնել ղարաբաղյան դիրքերին[31]: 1993թ. փետրվարի սկզբներին մարտական թեժ գործողություններ ծավալվեցին հյուսիսային ռազմաճակատում: Մարտակերտի շրջանի բռնազավթված տարածքներն ազատագրելու նպատակով, ըստ ԼՂՀ ԻՈՒ հրամանատարության օպերատիվ պլանի, հարձակումը պետք է իրականացվեր Վաղուհաս-Զագլիկ-Թալիշ, Չլդրան-Դրմբոն-Կուսապատ - Մարտակերտ եւ Սրխավենդ - Բաշ Գյունափայա - Մանիքլու - Ջանյաթաղ-Գյուլաթաղ-Մարտակերտ ուղղություններով: Այս ռազմագործողությունն իրականացնելու խնդիրը հանձնարարվեց Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումներին, 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի զինուժին եւ Հայաստանի տարբեր շրջաններից կազմված կամավորական ջոկատներին: Հարձակումը սկսվեց փետրվարի 5-ին: Մի քանի օրվա ընթացքում կոտրելով թշնամու դիմադրությունը, ղարաբաղյան ուժերն ազատագրեցին Կիչան, Չլդրան գյուղերը եւ դուրս եկան Մարտակերտ-Քելբաջար մայրուղու Դրմբոն հատվածը: Փետրվարի երկրորդ կեսին ղարաբաղյան ուժերին հաջողվեց ազատագրել Դրմբոն, Վաղուհաս, Չափար, Զարդախաչ, Հաթերք գյուղերը եւ լրիվությամբ վերահսկողության տակ առնել Մարտակերտ-Քելբաջար մայրուղին: Ահեղ մարտեր սկսվեցին Սարսանգի հիդրոհանգույցի ազատագրման համար:

Ապրիլի 2-ը մարտական գործողությունների վճռական պահն էր: Այդ օրը հայկական զինուժի կողմից գրավվեց Քելբաջարը Գյանջայի հետ կապող ճանապարհի խաչմերուկը, իսկ 3 օր հետո՝ ապրիլի 5-ին, ԼՂՀ ԻՈՒ ստորաբաժանումները դուրս եկան Օմարի լեռնանցք: Այդ հաղթարշավով ղարաբաղյան բանակը շոշափելի հարված հասցրեց հակառակորդին, ի դերեւ հանելով այս հատվածում առաջխաղացման նրա մտադրությունները: 1993թ. ապրիլի երկրորդ կեսից ռազմաճակատում իրադրությունը համեմատաբար հանդարտվեց: Հակառակորդի կողմից հարձակողական գործողությունների նման պասիվությունը բացատրվում էր Ադրբեջանի ներքաղաքական անկայուն վիճակով եւ, իհարկե, նաեւ

[31]Տե՛ս Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանների Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում., Ստեփանակերտ, 2008., էջ28:

մարտական գործողությունների ծավալման համար առկա անբարենպաստ եղանակով[32]:

1992թ. հունիսի կեսերին ադրբեջանական զինված ուժերն ամբողջովին գրավեցին Շահումյանի շրջանը և զանգվածային ոճրագործությունների միջոցով այնտեղից դուրս մղեցին հայկական բնակչությանը: Ամբողջական էթնիկ զտումից հետո Ադրբեջանը վերաբնակեցրեց շուրջ երկու տասնյակ հայկական բնակավայրեր ունեցող տարածաշրջանը: Նույն ճակատագրին արժանացան Արցախի Մարտակերտի և Մարտունու այն հատվածները, որոնք օկուպացվեցին Ադրբեջանի կողմից: Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող Արցախի տարածքներում իրականացված էթնիկ զտումները և ադրբեջանցիներով այդ տարածքների հաջորդական վերաբնակեցումն այսօր էլ Ադրբեջանի ղեկավարությունը ներկայացնում է որպես ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման լավագույն տարբերակ: Այս իրողությունն առավել ևս ընդգծում են այն անվտանգության վտանգները, որոնց ենթարկվում է այսօր Արցախի ժողովուրդը[33]: Շահումյանի շրջանի նախկին շրջկենտրոնը 1992 թվականին Օղակ գործողության ժամանակ ադրբեջանցիները բռնազավթել են քաղաքը, տեղահանել հայ բնակչությանը: Այժմ քաղաքը վերանվանվել է Աշաղի Ագջաքենդ: Հունիսի 12-ին 2-րդ 3-րդ 4-րդ 5-րդ պաշտպանական շրջանների հետ միասին ԿՊԾ ստորաբաժանումները ձեռնամուխ եղան Մարտակերտ քաղաքի և շրջանի ազատագրման խոշորամասշտաբ գործողությանը: Կարճ ժամանակահատվածում գրավելով օպերատիվ մարտավարական նշանակության կարևոր բարձրունքներ ղարաբաղյան ուժերը ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և մինչև հունիսի 20-ը ոչնչացրին Գալաչիլարի Բոյահմեդլի Փափրավենդ բնագծերի թշնամական հենակետերը: Այնուհետև մարտական գործողությունները տեղափոխվեցին «Պուշկեն յալ» կոչվող բարձունքի վրա: Հունիսի 26-ի վաղ առավոտյան ժամը 4.55 րոպեին ռազմավարական կարևորության այդ հենակետը վերջապես ազատագրվեց մեր զինված ուժերի կողմից[34]:

---

[32]Տե՛ս Հասրաթյան Ս.,Գոյամարտ., ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց ք.Ստեփանակերտ, 1998թ., էջ19-20:

[33] Տե՛ս ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Արցախի Շահումյանի շրջանի օկուպացիայի 28-րդ տարելիցի կապակցությամբ 13 հունիսի., 2020, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/06/13/c_nkr/10304:

[34]Տե՛ս Հասրաթյան,, Ս., Մարտնցում., ՊԲ կենտրոնական պաշտպանական շրջանի մարտական ուղու համառուտ պատմություն., էջ 26 :

ԳԼՈՒԽ 3. ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1993Թ ԴԵԿՏԵՄԲԵՐ-1994Թ ՄԱՅԻՍ ԵՎ ԲԻՇՔԵԿԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ԿՆՔՈՒՄԸ

3.1 Քարվաճառ. (*Քելբաջարի) ազատագրում*

1993 թվականի մարտի վերջին իրավիճակը կտրուկ սրվել էր հյուսիս արևմտյան ճակատում: Ադրբեջանի Լաչին-քելբաջարյան խմբավորումը հյուսիս արևմտյան և հարավարևելյան ուղություններից սկսեց թիկունքային հուժկու հարձակողական գործողություններ ծավալել Մարտակերտի և Լաչինի շրջաններումտեղակայված հայկական ուժերի նկատմամբ:Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարության առջև խնդիր դրվեց վնասազերծելու Քելբաջարում և Լաչինում տեղակայված կրակակետերն ու ջաղջախելու Լաչին-քելբաջարյան խմբավորումը: Ինքնապաշտպանության ուժերի 28-ամյա հրամանատար փոխգնդապետ Սամվել Բաբայանը գիտակցում էր ձեռնարկվող ռազմական գործողությունների բարդությունը: Այստեղ ամեն ինչ դրվում էր զոհասեղանին բանակի վարկանիշը, արցախահայության անվտանգության ապահովման խնդիրը և ինչու չէ իր հրամանատարի հեղինակության հարցը:1993թ մարտի 27-ին կանխարգելիչ հարվածներից ու հրետանային նախապատրաստությունից հետո ձեռնարկեցին Քելբաջարի շրջանի հենակետերի վնասազերծման և Լաչինի շրջանի տարածքների ազատագրական գործողությունը մի քանի ուղղություններով:Հյուսիսային Օմարի ուղղությունում հարձակումներն իրագործում էին Մարտակերտի պաշտպանական շրջանի գումարտակները հրամանատար Նորայր Դանիելյանի գլխավորությամբ: Մարտակերտ-Քելբաջարի ճանապարհի ուղղությունում Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Մոնթե Մելքոնյանի ղեկավարությամբ գործող խմբավորումը: Վանք-Նարեշտար-Լաչին-Քելբաջար ճանապարհի ուղղությունում գործում էին Վանքի գումարտակը հրամանատար Յուրի Հակոբյանի «Սիսական» ջոկատը հրամանատար Աշոտ Մինասյան այլ ուղղություններով Կարեն Արզումանայն, Վիտալի Բալասանյան, Արշավիր Ղարամյան և Վլադիմիր Կասյան[35]:

[35] Տե՛ս Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են Ազդականչ 44., Երևան, 2008, էջ 86-91:

Հարձակումը սկսելուց մի քանի օր առաջ ղարաբաղյան ուժերը հակառակորդին տեղեկացնում են սպասվող գրոհի մասին: Իրենք՝ բնակիչները, դա հաստատել են միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ զրույցներում: Նախապես տեղեկացնելով սպասվող հարձակման մասին, ղարաբաղյան ուժերը մի քանի նպատակներ էին հետապնդում: Նախ, երբ քաղաքացիական բնակչության շրջանում առաջանում է խուճապ, և բնակիչները լքում են իրենց տները, զինվորների մոտ կռվելու ցանկությունը նվազում է, մինչդեռ խաղաղ բնակչության առկայության պայմաններում նույն զինվորները կռվում են մինչևվերջին փամփուշտը, մինչև մահ: Բացի այդ, հակառակորդի մոտ խուճապ առաջացնելն ինքնին նվազեցնում է հնարավոր զոհերի և վիրավորների թիվը ինչպես ադրբեջանցիների, այնպես էլ հայերի շրջանում, քանի որ, ըստ էության, անողոք մարտեր չեն մղվում: Այսպիսի ռազմավարության օրինակ էր Քելբաջարը:

Արդեն փետրվար-մարտ ամիսներին, երբ ղարաբաղյան ուժերը մեկը մյուսի հետեւից ազատագրում էին Մարտակերտի գյուղերը, Քելբաջարը փաստացի շրջափակման մեջ էր: 1936 քառ. կմ տարածքով շրջանն արեւմուտքից սահմանակցում է Հայաստանի Վարդենիսի շրջանին, հարավից՝ Լաչինին, որը 1992թ. մայիսին անցել էր ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ, հյուսիսից՝ Օմարի լեռնանցքին, որը ձմռան և վաղ գարնան ամիսներին դառնում է գրեթե անանցանելի: Միակ ճանապարհը՝ Քելբաջարից Միր Բաշիր և դեպի Ադրբեջանի մյուս մասերը, անցնում էր Մարտակերտի շրջանով, որն արդեն ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ էր: Հակառակորդին մնում էր նահանջել լեռնային շրջանի կածաններով և Օմարով: Ադրբեջանական մոտ 200 հոգանոց զորախումբը փորձում է օգնության հասնել, սակայն Մարտակերտից Քելբաջարի ճակատ է տեղափոխված Սամվել Կարապետյանն իր զինվորներով ջախջախում է հակառակորդին: Քելբաջարի ռազմական գործողությունը՝ Սամվել Բաբայանի խոսքերով, իրականացվել է 4 ուղղություններով[36]:

Վերհիշելով Քելբաջարյան ազատագրական ռազմական գործողությունները Սամվել Բաբայանը պատմել է «Ֆինգայում այդ ընթացքում մարտերը շարունակվում էին և փորձում էինք հակառակորդին ստիպել որ իր ուժերով դեռ մնա այդտեղ: Ես համոզվեցի որ հաջողվեց մեր կամքն թելադրել հակառակորդին որից հետո

[36] Տե՛ս Քարվաճառ/Քելբաջարի առումը. 1993 թվական., Հատված Թաթուլ Հակոբյանի Կանաչ ու Սև. Արցախյան Օրագիր գրքից., Քսաներեքերորդ գլուխ, https://www.aniarc.am/2020/11/25/karvajar-part-tatul-book-eastern-armenian/:

փորձեցինք հարվածել Քելբաջարին. Մի քանի ուղղություններով առաջինը Օմարի հատվածը երկրորդը Մարտակերտ-Քելբաջար ճանապարհը որը դուրս է գալիս թունելի կողմը և փակում խաչմերուկը երրորդը Վանք գյուղից դեպի Լաչին-Քելբաջար ճանապարհն փակելն էր և հսկողության տակ առնելը չորորդը Ֆինգան: Առաջին օրվա հարձգկումները Օմարի և Վանքի ուղղություններում պսակվեցին հաջողությամբ[37]: Երորդ ուղղությունում հրամ, Մոնթե Մելքոնյան ունեցանք անհաջողություն խփվեց ու շարքից դուրս եկավ մեր տանկը, և ունեցանք կորուստներ: Հետախուզական տվյալների վերլուծությունից հետո հաջորդ օրը ձեռնարկեցինք հակահարձակումներ և ունեցանք հաջողություն վերագրավելով առաջին գիծը: Օմարից մինչև Ֆինգա Քելբաջար-Գյանջա, Լաչին-Քելբաջար մայրուղիները վերցրինք վերահսկողության տակ[38]:

1994 թ. փետրվարի 18-ին Քելբաջարի (Քարավաճառ) շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումով, որտեղ մարտական գործողություններն ընթանում էին 3000 մ և ավելի բարձր լեռնային շրջաններում սառնամանիքի պայմաններում, ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող պաշտպանական ուժերի թիկունքը: Աղդամի շրջանի և Միրբաշիրի (Թարթառի) ուղղությամբ ձեռնարկված լայնածավալ գործողությունները լիակատար խուճապի մատնեցին ադրբեջանցիներին: Ազատագրվեցին Մարտակերտի և Ասկերանի շրջանների բնակավայրերը: Շուրջ երեքամսյա թեժ մարտերի ընթացքում թշնամին կորցրեց 5.000-ից ավելի զինվոր և սպա, 72 միավոր տեխնիկա[39]:

Արցախյան գոյապայքարի տարեգրության մեջ Քելբաջարի ազատագրումը նոր շրջափուլի սկիզբն էր: Այդ ժամանակ Բաքվում լիակատար խուճապ էր:Հայտարարվեց որ պատերազմը մտել է իրենց համար վտանգավոր փուլ:Ադրբեջանի ամբողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն:
Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը հայտարարեց «Քելբաջարից հետո պարերազման ադրբեջանի համար հեռանկար չունի…»[40]:

3.2 *Ակնայի (Աղդամ) ազատագրում*

---

[37] Նույն տեղում էջ 92-93:
[38] Նույն տեղում էջ 93-94:
[39] Տե՛ս Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը., Երևան, 2002., էջ 403-404 :
[40] Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., նշվ. աշխ. էջ 95-96:

1993-ի ամռանը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը մի քանի ուղղություններով սկսեցին Աղդամը շրջապատող հենակետերի լռեցման լայնածավալ գործողությունը: Թշնամին քաղաքի մատույցները սպասվածի չափ չէր ականապատել, մինչեւ վերջին պահը հուսալով, թե ինքն է անցնելու հարձակման ու թերեւս միայն Շելլին էր բացառություն, որտեղ գրագետ տեղադրված ականադաշտեր կային: Աղդամի գործողության ժամանակ, ի թիվս այլոց, ինքնապաշտպանության ուժերի վեց սակրավոր զոհվեց: Ընդհանուր հարձակմանը նախորդեցին դիրքային իրավիճակի բարելավման դժվարին գործողություններ, որոնցից հիշատակելի են հատկապես Աղդամ-Մարտակերտ սահմանագծում մղված հաջող մարտերը, եւ կարեւոր բարձունքների գրավումը: Այդ մարտերում էլ, Մարզիլլու հենակետը ոչնչացնելիս հունիսի 12-ին զոհվեց Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս, Մարտունի պաշտպանական շրջանի հրամանատար, փոխգնդապետ Մոնթե Մելքոնյանը: Հուլիսի 20-ին ազատագրվեց Փոլադլուն, որը ճանապարհային կարեւոր հանգույց էր: Թշնամին չէր հաշտվում Աղդամի կորստյան հետ, ինչի վկայությունը Շելլիի մարտերն էին, որտեղ մեր ականները թշնամուն նաեւ զրահատեխնիկայի կորուստներ պատճառեցին:

«Ուղտի մեջք» կոչվող բարձունքից թշնամին հրետակոծում էր Ստեփանակերտը: Չնայած՝ ինքնապաշտպանության ուժերի հրետանավորների հակադարձ գործողություններին, թշնամին քաղաքին ու զորքերին մեծ վնաս հասցրեց, քանի որ անհնար էր որոշել նրանց կայանքների տեղակայման ճշգրիտ վայրը: Աղդամի գրավման հրետանային ապահովումը դժվարին աշխատանք էր. հրետանավորները շուրջ մեկ ամիս հետախուզում էին իրականացնում:
Հրետանու զգալի մասը դեռ Մարտակերտում էր, եւ հրետանավորները կարողացան այդ կայանքները Կիչանում այնպես տեղաբաշխել, որ կարողանային ե՛ւ հարվածել Աղդամին, ե՛ւ դիմագրավել նաեւ Մարտակերտից հնարավոր հարձակմանը[41]:

Հակառակորդը, բազմապատկելով Աղդամում կենտրոնացված սպառազինությունն ու կենդանի ուժը, տենդագին նախապատրաստվել էր վերսկսելու հարձակումը Ասկերան - Ստեփանակերտ ուղղությամբ: Աղդամի և նրա շրջակայքում գտնվող կրակակետերի ճնշման ռազմական գործողությունները սկսվել են 1993-ի հուլիսի 4-ին:

[41] Նույն տեղում., http://www.hayzinvor.am/5167.html:

1993թ. հուլիսին ծավալվեց ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ընթացքում տեղի ունեցած հիրավի նշանավոր ռազմագործողություններից մեկը՝ Աղդամի ռազմական հենակետի ոչնչացման օպերացիան: Ադրբեջանական բանակի հրամանատարությունը, գիտակցելով, որ Աղդամ քաղաքի անկումը ոչ միայն ռազմական, այլեւ սեփական ժողովրդի բարոյահոգեբանական պարտությունը կդառնա, ռազմաճակատի այս հատված նետեց իր զինված ուժերի ծանրակշիռ մասը: Աշխատում էին գրեթե բոլոր զինատեսակները: Զենքի եւ զինամթերքի խոշոր պաշարներ ունեցող թշնամին երկու օր անընդհատ ղարաբաղյան դիրքերի վրա կրակե հեղեղ էր թափում: Սակայն հայ զինվորի ոգին ամուր էր:

1993թ. հուլիսի 23-ին ղարաբաղյան զորամիավորումները, կոտրելով հակառակորդի դիմադրությունը, մարտերով մտան Աղդամ: Լուծվեց Ստեփանակերտ քաղաքի պարբերաբար հրետակոծման եւ Ասկերանի ու հարակից շրջանների վրա հարձակման վտանգի կանխման հարցը:

Աղդամի ռազմական հենակետի անկմամբ Ադրբեջանի ղեկավարությունը հայտնվեց անելանելի վիճակի մեջ: Գիտակցելով, որ ռազմական գործողությունների շարունակումը հղի է անկանխատեսելի հետեւանքներով, նա ստիպված էր հանդես գալ առաջարկությամբ, համաձայն որի ղարաբաղյան կողմի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց հուլիսի 25-ի 00 ժամից սկսած մինչեւ հուլիսի 28-ը դադարեցնել կրակը: Հակամարտության ողջ ընթացքում առաջին անգամ ադրբեջանական կողմը դիմեց կառուցողական քայլի: Ավելի ճիշտ՝ այդպես թվաց: Այնինչ իրականում դա հերթական խոստումնազանցություն էր Բաքվի կողմից[42]:

Հայկական զինված ուժերը քառասուն օր տեւած մարտերից հետո 1993 թվականի հուլիսի 23-ին ազատագրեցին Աղդամ քաղաքը: Աղդամի գրավումը հնարավորություն տվեց վճռական հարված հասցնել թշնամուն՝ առաջին հերթին կոտրելով նրա դիմադրողական ուժը: «Թշնամու անկումը սկսվեց Աղդամով», Աղդամը կամ «Սպտիակ քաղաք»-ը ռազմական կարեւոր նշանակության ունեցող վայր էր, որտեղ, ըստ պատմաբանի, խորհրդային տարիներին հնարավոր էր գտնել ամեն ինչ, անգամ զենքի տեսակներ: 1993 թվականին Աղդամի կրակակետերի ոչնչացումը մասնագետները գնահատեցին որպես Արցախի բանակի փայլուն գործողություններից մեկը, որի հաջողությամբ մեծապես պայմանավորված էր նաև

[42]Տե՛ս Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանների Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում., Ստեփանակերտ, 2008., էջ 35-36:

անկախության համար մղած Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ընդհանուր հաղթանակը:

3.3 *Վարանդայի «Ֆիզուլի» Ջրականի «Ջաբրայիլ» և Սանասարի «Կուբաթլու» ազատագրումը*

Ըստ հետախուզության տվյալների հակառակորդը հարավային շրջաններում մեծ քանակի կենդանի ուժ և զինտեխնիկա էր կուտակել: Հակառակորդը գործածության մեջ դրեց միջին հեռահարության հրթիռներ որոնք խոշոր ավերածություններ պատճառեցին խաղաղ բնակավայրերին: Պաշտպանության բանակի հրամանատարը հարավային ռազմաճակատում Ֆիզուլի ՋաբրայիլԿուբաթլու իրադրությունը շտկելու նպատակով մշակեց պաշտպանական-հարձակողական օպերատիվ պլան, որին ընդիմանում էր Հայաստանի քաղաքական ղեկավարությունը: Ավելին Հադրութ մեկնեց Աստվածատուր Պետրոսյանի ղեկավարած «բանագնացների»մխումբը համոզելու 5-րդ բրիգադի Էջմիածնի, Երևանի, Արմավիրի, Վեդիի, Վանաձորի և այլ մարտական վաշտերի հրամանատար Մանվել Գրիգորյանին չմասնակցել Ֆիզուլիի ազատագրման ռազմական գործողությանը: Սակայն Մանվել Գրիգորյանը կարևորելով ռազմագործողության անհրաժեշտությունը մերժեց «բանագնացներին»: Խնդիրը պարզ էր պատմում է գեներալը.-Հակառակորդը Ֆիզուլիի Ջաբրայիլի,Կուբաթլուի շրջանների կրակակետերից հրթիռակոծում էր Հադրութի, Մարտունու, Գորիսի, Կապանի շրջանների պաշտպանական դիրքերը:

Խնդիր դրվեց լռեցնելու այդ կրակակետերը և հակառակորդի ուժերը հեռացնելու ԼՂՀ և ՀՀ սահմաններից: Ըստ մեր կազմած օպերատիվ պլանի հարձակումները զարգացրինք ֆիզուլիի շրջանում[43]:

ԼՂՀ ԻՈՒ հրամանատարությունը ռազմաճակատի հարավում իրադրությունը շտկելու նպատակով ստիպված էր ձեռնարկել համարժեք գործողություններ: Հարկ է ընդգծել, որ դեռեւս մինչեւ ամռան վերջերը Հադրութի շրջանի տարածքի մի մասը շարունակում էր մնալ հակառակորդի կողմից բռնազավթված: Ցոր, Առաքյուլ եւ Բանաձոր գյուղերը թշնամու համար վեր էին ածվել խոշոր ռազմակայանների: Հակառակորդի ձեռքին էին նաեւ Դոլանլար, Ծամձոր հայկական գյուղերը:

---

[43] Տե՛ս Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են Ազդականչ 44., Երևան, 2008., էջ 126-127:

Համակողմանի նախապատրաստությունից հետո հարավային ուղղությամբ գործող Կենտրոնական պաշտպանական շրջանի զորքերը, որոնց ձախ թեւից համագործակցում էր 1-ին պաշտպանական շրջանի զինուժը, օգոստոսի 15-ին հարձակողական մարտերով մտան պատմական Դիզակի Ցոր գյուղը, ապա, զարգացնելով առաջխաղացումը, ազատագրեցին Բանաձոր եւ Առաքյուլ բնակավայրերը: Օգոստոսի երկրորդ կեսին ռազմական գործողություններ ծավալվեցին Ֆիզուլի-Ջեբրայիլ-Ղուբաթլու մարտագծի երկայնքով:

Օգոստոսի 22-ին 1-ին եւ 2-րդ պաշտպանական շրջանների ստորաբաժանումների ճնշման տակ 160-րդ ադրբեջանական գնդի ստորաբաժանումները հարկադրված էին թողնել Ֆիզուլի քաղաքը եւ շուրջ 1380 քառ. կմ տարածք ունեցող համանուն շրջանը[44]:

Հարձակողական մարտերը հաջողությամբ էին ընթանում նաեւ Ջեբրայիլի ուղղությամբ: Ինքնապաշտպանության ուժերի նպատակասլաց գործողությունների շնորհիվ այդ ընթացքում ոչնչացվեցին հակառակորդի մի շարք ռազմական հենակետեր: Օգոստոսի 23-ին ղարաբաղյան զորքերը մտան Լենքորանի գումարտակի կողմից պաշտպանվող Ջեբրայիլ շրջկենտրոնը: Իսկ երկու օր հետո հայկական ուժերի վերահսկողության տակ ընկավ 1050 քառ. կմ մակերես ունեցող համանուն շրջանի տարածքը:

Ռազմաճակատի հարավային հատվածում ձեռք բերած հաջողությունները հայ զինվորին դարձրին ավելի ինքնավստահ: Նրա յուրաքանչյուր հարված շեշտակի էր եւ վերջնական[45]: Օգոստոսի 26-ին թշնամուց լիովին մաքրվում է նաև Հադրութի շրջանի ամբողջ տարածքը: Հայկական ստորաբաժանումները կանգ են առնում Արաքսից մոտ 15 կմ հեռավորության վրա:

Ֆիզուլիի և Ջաբրայիլի ազատագրումից հետո Կուբաթլուի շրջանը մնացել էր սեպի պես խրված պաշտպանության բանակի հարավային ռազմաճակատում: Այդպիսով՝ եթե ադրբեջանական բանակը ռազմաճակատի արևելյան հատվածում կարողանար ուշքի գալ պարտություններից հետո, Կուբաթլուն, որտեղ տեղակայված էր թշնամու բավականին ուժեղ խմբավորում, կարող էր լուրջ վտանգ ստեղծել պաշտպանության բանակի համար՝ հարվածելով թիկունքից: Իր հերթին Կուբաթլուն բավականին խոցելի վիճակում էր, քանի որ Ադրբեջանի վերահսկողության տակ

[44]Տե՛ս Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանների Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում., Ստեփանակերտ, 2008., էջ 37:
[45] Նույն տեղում էջ 38:

գտնվող մնացած տարածքների հետ կապված էր 15 կմ-ոց մերձարաքսյան նեղ շերտով: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ ՊԲ կենտրոնական շտաբը որոշում է ոչնչացնել Կուբաթլուի ռազմական հենակետերը: ՊԲ կենտրոնական շտաբի ցուցումով՝ Կուբաթլուի ռազմավարական նշանակության հենակետերը ոչնչացնելու նպատակով այնտեղ են կենտրոնացվում 1-ին, 2-րդ, 4-րդ և Կենտրոնական պաշտպանական շրջանների ստորաբաժանումները: Կուբաթլուի ուղղությամբ հարձակումը ենթադրում էր, որ սկզբում Շուշիի պաշտպանական շրջանի ստորաբաժանումները, Վաչագան Իշխանյանի հրամանատարությամբ, Քիրս լեռան շրջանից պիտի մտնեն Կուբաթլուի շրջան: Իրենց հերթին շրջան պիտի մտնեին նաև Հադրութի պաշտպանական շրջանի՝ Խծաբերդի ու Տումիի վաշտերը: Սակայն այս առաջին հարձակումն անհաջողություն է կրում, և հայկական ուժերը, կորուստներ տալով, վերադառնում են ելման դիրքեր:

Կուբաթլուի ուղղությամբ հաջորդ հարձակումը սկսվում է մոտ մեկ շաբաթ անց: Այդ ընթացքում Մարտակերտի պաշտպանական շրջանից մեկ գումարտակ և Շուշիի Առանձին հրաձգային գումարտակից մեկ վաշտ է տեղափոխվում Լաչինի շրջան՝ հարձակմանը մասնակցելու նպատակով, իսկ Մարտունու, Հադրութի և Կենտրոնական պաշտպանական շրջանները ձևավորում են հարձակողական 3 խմբավորումներ: Կուբաթլուի ուղղությամբ նոր հարձակումը սկսվում է օգոստոսի 29-ին՝ այն բանից հետո, երբ Լաչինի ուղղությամբ ադրբեջանցիները ձեռնարկում են հայկական պաշտպանական դիրքերը ճեղելքու անհաջող փորձ: Հարձակողական երեք խմբավորումները, ճեղքելով հակառակորդի պաշտպանությունը, դուրս են գալիս գլխավոր մայրուղի, գրավում Խանդիլի կամուրջը, Լաչին-Մամեդբեյլի ճանապարհի խաչմերուկներն ու ճանապարհահատվածները: Չնայած Կուբաթլուի բավականին ուժեղ ադրբեջանական խմբավորման համառ դիմադրությանը, հայկական ուժերը օգոստոսի 31-ին մարտերով մտնում են Կուբաթլու քաղաք, ապա նաև վերահսկողություն հաստատում համանուն շրջանի մեծ մասի վրա[46]:

Հոկտեմբերի 24-ին Ինքնապաշտպանության ուժերը մի քանի ուղղությամբ զարգացնելով առաջխաղացումը, ճնշեցին հակառակորդի ամենախոշոր հենակետերից մեկը՝ Հորադիզի երկաթուղային հանգույցը, որը հարավային

[46] Տե՛ս Մխիթարյան.,Ա., ՀՅԴ ԳՄ Ազատամարտիկների հանձնախմբի պատասխանատու., 07/01/2021 https://azg.am/analytics/%D5%BB%D5%A1%D5%A2%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%AC%D5%AB%D5%B4%D5%A5%D5%AD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D6%82%D5%A2%D5%A1%D5%A9%D5%AC%D5%B8%D6%82%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A1/ :

ռազմաճակատում հանդիսանում էր թշնամու բանակին սնուցող հիմնական երակը: Գրավելով ադրբեջանական բանակի այս ռազմակայանը, ղարաբաղյան զինուժը Զանգելանի շրջանը եւ Ջեբրայիլի ու Ղուբաթլուի շրջանների դեռեւս չզբաղեցված տարածքները մեկուսացրեց Ադրբեջանից: Այս ուղղությամբ գործող թշնամական ստորաբաժանումները փաստորեն հայտնվեցին շրջափակման օղակի մեջ: Մի քանի օր հետո՝ նոյեմբերի 1-ի առավոտյան, հայկական ստորաբաժանումները վերահսկողության տակ առան Զանգելան շրջկենտրոնը՝ հարակից բնակավայրերով հանդերձ:

Նույն օրը Ռուսաստանի միջնորդությամբ 10-օրյա հրադադարի մասին համաձայնագիր է ստորագրվում Արցախի և Ադրբեջանի միջև: Հայկական կողմից համաձայնագիրը ստորագրում են ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանը և արտգործնախարար Արկադի Ղուկասյանը, իսկ Ադրբեջանի կողմից՝ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Սաֆար Աբիևը և Ադրբեջանի ԳԽ նախագահ Ա Ջալիլովը:Չնայած լարվածության այսպիսի մեծացմանը, այնուամենայնիվ, հաջողվում է խուսափել պատերազմի ընդլայնումից, իսկ հաստատված հրադադարն էլ պահպանվում է մինչև 1993 թ.-ի հոկտեմբերի 10-ը: Այդ ընթացքում Ադրբեջանը սկսում է պատրաստվել նոր ռազմական գործողությունների. 1993 թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Ան-124 Ռուսլան» ինքնաթիռներով Ուկրաինայից Ադրբեջան է բերվում 40 միավոր Տ-55 տանկ: Ադրբեջանական բանակը համալրվում է աֆղան, չեչեն և արաբ վարձկաններով: Բացի այդ՝ Հեյդար Ալիևին հաջողվում է նաև կայունացնել Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակը:
Ռազմական գործողությունները սկսվում են Ադրբեջանում նախագահական ընտրությունների ավարտից անմիջապես հետո:

Հոկտեմբերի 10-ին Ջաբրայիլի՝ իր հսկողության տակ գտնվող հատվածից ադրբեջանական բանակը լայնածավալ հարձակում է սկսում Հադրութի շրջանի ուղղությամբ: Հոկտեմբերի 17-ին ադրբեջանցիները հարձակում են սկսում նաև ԼՂՀ հյուսիսարևելյան հատվածում և Աղդամի ու Ֆիզուլիի սահմանամերձ դիրքերի ուղղությամբ: Մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի 24-ին, ՊԲ ստորաբաժանումները հաջողությամբ կասեցնում են հակառակորդի առաջխաղացումը, ընթացքից անցնում հակահարձակման և ազատագրում Զանգելանի շրջանը, Ջաբրայիլի ու Կուբաթլուի շրջանների՝ մինչ այդ չգրավված տարածքները, Ֆիզուլիի շրջանի Հորադիզի ենթաշրջանը:

Հակառակորդը, կորցնելով մեծաթիվ կենդանի ուժ և ռազմական տեխնիկա, նահանջել է դեպի Իրանի Իսլամական Հանրապետության սահմանները: Զանգելանի ռազմական գործողության հաղթանակով վերացվել են Արցախի հարավարևելյան, հարավային և հարավարևմտյան սահմանամերձ գոտուց մշտապես սպառնացող վտանգները:

3.4 *Օմարի ազատագրում*

1994թ. փետրվարի 17-ին սկսվեց Օմարի լեռնանցքի գրոհը: Պաշտպանության բանակի ստորաբաժանումները, վնասազերծելով թշնամու կրակակետերը, Չիչազլու, Բաշիրսաղ, Յանշաղ և այլ գյուղերում հնարավորություն ստեղծեցին աջ և ձախ թևերից զարգացնելու գրոհները:

Փետրվարի 18-ին ադրբեջանական զորքերը Օմարի լեռնանցքով դիմում են փախուստի: Ադրբեջանական բանակի երկու բրիգադ ընկնում է շրջափակման մեջ և փորձում փախչել նեղ լեռնանցքի միջով, սակայն հայտնվեցին հայկական «Գրադ» կայանի կրակի տակ: Ադրբեջանցիների կորուստները զգալի էին. հավանական է, որ գնդակոծության հետևանքով ոչնչացվել է 1500 ադրբեջանցի զինվոր: Օպերատիվ ուղղությունների հրամանատարներից էին Արցախի հերոսներ Արշավիր Ղարամյանը (Բարսեղի շենի լեռան (2298.3 մ) ուղղություն) և Պետրոս Ղևոնդյանը (2008 մ նիշով անանուն բարձունքի ուղղություն)[47]:

Հակահարձակումը իրականացվեց հստակ և կտրուկ: Մեկը մյուսի հետևից վերագրվեցին Օմարի տարածաշրջանում տեղաբաշխված հակառակորդի ռազմական հենակետերը:

Փետրվարի 18-ին առավոտյան Քելբաջարի հյուսիսային հատվածը ներառյալ Օմարի լեռնանցքը ամբողջությամբ ընկավ ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ:Ձախողվեց հակառակորդի հյուսիսային խմբավորման ռազմագործողությունը[48]:

3.5 *Բիշքեկի զինադադարի կնքումը*

Չկարողանալով ռազմական ուժի օգնությամբ իր օգտին լուծել ղարաբաղյան հիմնահարցը և հետագա խայտառակությունից խուսափելու համար՝ ադրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994 թ. մայիսին հրադադար խնդրել: Մայիսի 5-ին Կիրգիզիայի մայրաքաղաք Բիշքեկում Ռուսաստանի, Ղրղզստանի և

[47] Տե՛ս Ձեզ Բացակա Չենք Դնի., 2022-02-18., https://yerkirmedia.am/hy/article/2022/02/18/53682 :
[48] Տե՛ս Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանների Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում., Ստեփանակերտ,2008., էջ 44:

ԱՊՀ միջնորդական խորհրդաժողովի միջնորդությամբ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության խորհրդարանների ղեկավարները (Յ. Մամեդով, Կ. Բաբուրյան և Բ. Արարքցյան) ստորագրեցին արձանագրություն կրակի դադարեցման վերաբերյալ: Բիշքեկյան արձանագրությանը Ադրբեջանը միացել է ավելի ուշ՝ մայիսի 8-ին: ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պավել Գրաչովի միջնորդական ջանքերով ՀՀ, ԱՀ պաշտպանության նախարարները (Ս. Սարգսյան, Մ. Մամեդով և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայան) մայիսի 11-ին համաձայնագիր ստորագրեցին կրակը դադարեցնելու վերաբերյալ[49]: 1994 թ. մայիսի 12-ին համաձայնագիրը ուժի մեջ մտավ: Հաջորդ օրը ադրբեջանական բանակն այն խախտեց: Վերջապես մայիսի 16-ին Պավել Գրաչովի նախաձեռնությամբ ու առաջարկությամբ ՀՀ պետնախարար Վ. Սարգսյանը, ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարները և ԼՂՀ ՊԲ հրամանատարը Մոսկվայում համաձայնության եկան մայիսի 17 ին 00:00 ժամից դադարեցնել կրակը, նաև նախատեսված էր ղարաբաղյան եվ ադրբեջանական զորքերի տարանջատում, կողմերի միջև բուֆերային գոտու ստեղծում եվ այնտեղ խաղարարար ուժերի տեղակայում:

Փաստաթուղթը ստորագրեցին ՌԴ և ՀՀ պաշտպանության նախարարներ Պ. Գրաչովն ու Ս. Սարգսյանը, ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանը:Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ.Մամեդովը չստորագրեց. Նրան շտապ կանչեցին Բաքու: Թեպետ Ադրբեջանը հրաժարվեց ստորագրեել Մոսկովյան ամփոփիչ արձանագրությունը, որով ղարաբաղյան հակամարտության գոտում սկիզբ առավ տևական հրադադարը. Հետագայում հուլիսի 27-ին Մ. Մամեդովը ստիպված իր ստորագրությունը դրեց հրադադարի համաձայնագրի տակ[50]: Դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը: Այսպիսով Ղարաբաղյան հակամարտությունը թևակոխեց հերթական բանակցային գործնթացի փուլ: 1994թ մայիսին հրադադարի հաստատումից հետո ԼՂՀ-ում սկսեցին արմատավորվել կառավարման ավելի ժողովրդական ձևեր: ԼՂՀ ԳԽ-ն դադարեց ՊՊԿ-ի լիազորությունները և ընդունեց «ԼՂՀ նախագահի մասին» օրենքը,

[49] Տե՛ս Մինասյան Է., հայոց նորագույն պետականության քառորդ դարը., 1991-2017.,ԵՊՀ հրատ., Երևան, 2018թ., էջ 96:
[50] Տե՛ս Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 404:

հանրապետությունում հաստատելով նախագահի ինստիտուտ[51]: Չեմ կարող չնշել, որ Արցախյան պատերազմը տեղի է ունեցել համայն հայության՝ Հայաստանի և սփյուռքի ռազմական կարողությունների՝ մարդկային ուժի, նյութական, տեխնիկական և այլ միջոցների լայնածավալ օգտագործումով, ինչպես նաև բարեկամ երկրների, միջազգային առաջադեմ հասարակայնության բարոյական ու հոգեբանական մշտական աջակցությամբ: Արցախի հաղթական ավարտից հետո Ադրբեջանի իշխանությունները ստիպված որոշ ժամանակ հրաժարվեցին հակամարտության հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու քաղաքական գծից: Արցախի տարածքի շուրջ ստեղծվել է բավարար խորության անվտանգության գոտի, ինչը թույլ է տալիս Արցախի ազգաբնակչության անվտանգությունն ապահովելուց բացի, երկրում ծավալել նաև բնականոն կենսական ու սոցիալ-տնտեսական գործունեություն: Եվ վերջապես հայ ժողովուրդն իր միասնության և աննկուն ոգու շնորհիվ իրեն պարտադրված պատերազմից հաղթականորեն դուրս եկավ և ստեղծեց ազգային երկրորդ պետությունը Հայաստանի ազատագրված տարածքում:

ԳԼՈՒԽ 4. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի (գիտելիքներ/կարողություններ/հմտություններ, արժեքային համակարգ և դիրքորոշում) և խնդիր է դրվել սովորեցնել սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Փաստորեն, այսպես կոչված նոր մեթոդները նոր խնդիրների լուծմանը ծառայող մանկավարժական զինանոցում արդեն եղած մեթոդներն են, որոնք ստանում են նոր իմաստ, երանգ ու շեշտադրում[52]:

«Ուսուցման մեթոդը» բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել(կրթության բովանդակություն), ինչո՞ւ սովորեցնել(կրթության նպատակներ) և ինչպե՞ս

[51] Տե՛ս Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը եվ պետական շինարարության գործնթացը., 1991-1994., Երևան, 2018., էջ 197:
[52] Տե՛ս Ղուկասյան Ա., Ուսուցչի ձեռնարկ., Երևան., 2013., էջ 21:

սովորեցել(ուսուցման մեթոդիկա): Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակները իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը: Այսպիսով, ուսուցման գործընթացում մեթոդը ունի կապող օղակի բարդ և առանձանահատուկ դեր: Ի՞նչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է, որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողություն:

Մեթոդը գործունեության եղանակների և հնարների յուրատեսակ համակարգ է, որն ապահովում է գործունեության խնդիրների իրականացումը: Ժամանակակից մանկավարժության մեջ մեթոդների դասակարգման տարբեր սկզբունքներ կան: Ուսուցման մեթոդները պայմանականորեն կարելի է ներկայացնել երկու խումբով՝ ավանդական և նոր կամ ժամանակակից: Սակայն ոչ միշտ է, որ ընտրված մեթոդները տալիս են դրական արդյունքներ, դասավանդման մեթոդները ընտրելիս պետք է հաշվի առնել աշակերների տարիքային տարբերությունները, առանձնահատկությունները և հետաքրքրությունների շրջանակները:

Մեր աշխատանքում մենք առնչվելու ենք հետևյալ թեմայի դասավանդման հետ դպրոցում, «Արցախահայության ազգային- ազատագրական շարժումները, ԼՂՀ հռչակումը» թեմայի շրջանակներում:

Մինչ դասավանդման մեթոդներին անցնելը մենք պետք է կազմենք դասի պլան, ըստ որի կառաջնորդվենք թեմայի դասավանդման ժամանակ:

Դասի պլան

1. ***<u>Հիմնական հարցերը</u>***

1. Արցախահայության պայքարը 1923-1988թթ Հայկական ԽՍՀ-ին վերամիավորվելու համար, Գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքականութ- յունը և Արցախյան հարցը:

2. Արցախյան հարցի լուսաբանումը թուրք- ադրբեջանական լրատվամիջոցներում և մամուլում:

3. Արցախյան գոյապայքարը և ԼՂՀ հռչակումը:

2. Նպատակը և խնդիրները

Կրթական

1.Պետք է իմանա՝

1918-1988 թթ Արցախում տիրող իրավիճակի, տեղի ունեցող իրադարձությունների մասին, ինչպես նաև թե՞ ինչու Արցախահայությունը ոտքի կանգնեց և ի՞նչ էր պահանջում համայն հայությունը:

2. Պետք է կարողանա՝

Բացահայտել և ի մի բերել տեղի ունեցածը, հասկանալ, թե՞ ինչ է տեղի ունեցել և ինչու՞ է արցախահայությունը և այդ թվում ողջ հայ ժողովուրդը ցանկանում վերականգնել պատմության մեջ, թույլ տված սխալներից մեկը և հասնել պատմական արդարության:

3.Դաստիարակչական

Այս թեման աշակերտների մեջ սերմանում է հայրենասիրություն, սեր դեպի իր հայրենիքը, իր ժողովրդին և ազգային արժեքներին: Աշակերտների մոտ ձևավորվում է դեպի արդարություն, ազատություն և անկախության հասնելու ձգտումները:

4.Զարգացնող

Զարգացնել աշակերտների մոտ իրադարձությունների ճշգրիտ վերլուծելու և հասկանալու կարողությունները:

3. Ուսումնադիտողական պարագաները

1.Դասագիրք, պատմության տետրեր, նկարներ, քարտեզներ, համակարգիչ:

4. Դասատիպը

1. Նոր նյութի ուսումնասիրում, համակցված դաս, թեմայի քննարկում:

5. Ուսուցման մեթոդները և հնարները

1. Մտագրոհ հարցումներ
2. T- աձև աղյուսակ
3. Վերարտադրողական մեթոդ
4. Գործնական մեթոդ
5. «Վեբ- որոնում»
6. Խճանկար
7. Խմբային հետազոտության մեթոդ

8. Բացատրական- ցուցադրական մեթոդ

9. Խոսքային մեթոդներ / պատմել, զրույց, բանավեճ, դասախոսություն/ ։

Օրինակ Т- աձև աղյուսակ Աշակերտներն իրենց տետրերում գրի են առնում նմանատիպ աղյուսակները, որոնք դասը սովորելու ժամանակ, օգնում են պատկերացնել պատմական ժամանակաշրջանի առանձնահատկությունները և օրինաչափությունները: Ժամանակի ընթացքում, աշակերտների մոտ ի հայտ են գալիս որոշակի հմտություններ, նրանք կարողանում են ինքնուրույն դատողություններ անել տվյալ թեմայի վերաբերյալ, կարողանում են տալ որևէ պատմական փաստի կամ իրադարձության նշանակությունը և այլն: Զարգանում է նրանց ինքնուրույն ճանաչողական գործունեությունը, որը ենթադրում է դասընթացի ուսումնական նյութերի ամբողջական յուրացումը, որի շնորհիվ աշակերտները կարողանում են բացահայտել իմաստով ավարտուն մտքերը և դասընթացի հիմնական հասկացությունները[53]:

Դպրոցականների պատմական կրթության, տարածապատկերային մտածողության, պատկերացումների առաջացման և զարգացման խնդրում շատ մեծ դեր ունեն քարտեզները[54]: Պատմական և քարտեզագիտական գիտելիքները գտնվում են ամուր փոխհարաբերությունների մեջ: Պատմական քարտեզները միջոց են, ավելի գիտակցված ընկալելու պատմական իրադարձություններն ու երևույթները: Այն նպաստում է սովորողների ճանաչողական հմտությունների, ինքնուրույն և պատկերային մտածողության զարգացմանը[55]: Պատմության դասավանդման ընթացքում կարևոր դեր ունի նաև զննականությունը: Պատկերային զննականության մեջ զգալի դեր են կատարում ուսումնական նկարները: Նկարները պատկերացում են տալիս եզակի իրադարձությունների վերաբերյալ: Շատ հաճախ դրանք վերստեղծում են պատմության վճռական պահը, կամ պատմական որոշակի վայր: Դասի ժամանակ նկարը օգտագործվում է տարբեր նպատակներով որպես գիտելիքի ելակետային աղբյուր, պատումի նկարագարդում, ամրապնդման միջոց և այլն[56]:

Թեմայի դասավանդման սկզբում պետք է ներկայացնել ուսումնասիրվող տվյալ ժամանակաշրջանի հիմնական խնդիրների ամբողջական բնութագիրը,

---

[53] Տե՛ս Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան 2013, էջ 37:

[54] Տե՛ս նույն տեղում էջ 137:

[55] Տե՛ս նույն տեղում էջ 142:

[56] Տե՛ս Նույն տեղում, էջ 128-129:

որի վրա էլ պետք է հետագայում ծրագրել և իմաստավորել աշակերտների իմացական գործունեությունը:

դասավանդման մեթոդներ:

1. **Գործնական մեթոդներ**- Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո: Դրանք կրում են ընդհանրացնող բնույթ: Վարժություններն իրենց բնույթով բաժանվում են բանավոր, գրավոր, գրաֆիկական, ուսումնական-աշխատանքային վարժությունների, գործնական աշխատանքների: Դրանցից յուրաքանչյուրն իրականացնելիս սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանք, որոնք փոխկապակցվում են՝ կանխանշած նպատակին հասնելու համար: Սրանք կատարվում են ուսումնական բոլոր առարկաներից, ուսուցման գործընթացի բոլոր փուլերում: Բոլոր տեսակի վարժությունների բնույթը և մեթոդիկան կախում ունի տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից: Գործնական մեթոդը կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ. 1. առաջադրանքի պլանավորում, 2. առաջադրանքի կատարում, 3. կատարման ընթացքի խթանում, 4. վերահսկողություն, 5. կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում:

2. **Խոսքային մեթոդներ**- «պատմել» այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում: Պատմելը սկսվում է ներածությունով և ավարտվում ամփոփումով: Շարադրվում կամ պատմվում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ խստագույնս պահպանելով սիստեմատիկության և հաջորդականության սկզբունքը: Պատմելու ընթացքում վարպետորեն առանձնացվում է նյութի գլխավոր տարրերը: Գիտելիքները հիմնավորվում է օրինակներով, գիտական փաստերով, համապատասխան իլյուստրացիաներով և դեմոնստրացիաներով: Այս մեթոդի կիրառման ժամանակ գործադրվում է մի շարք հնարներ, օրինակ՝ «համեմատության», «համադրության», «սովորողների ուշադրության ակտիվացման» և այլն: Այս մեթոդը հիմնականում կիրառվում է դպրոցական ուսուցման ընթացքում: «Բանավեճ»- այս մեթոդը կիրառվում է սովորողների իմացական հետաքրքրությունները ակտիվացնելու, կարծիքները, համոզմունքները, տեսակետները հայտնելու, հարցապնդումներ անելու, ճշմարտությունն ի հայտ բերելու համար: Բանավեճի միջոցով արժևորվում, գնահատվում են սովորողների գիտելիքները, 2 կարողություններն ու հմտությունների չափը, ծավալը, զարգացման

աստիճանը: Առանց կայուն և խորը գիտելիքների դժվար է ակտիվորեն մասնակցել բանավեճին, համոզել ընդդիմախոսներին: Բանավեճը սովորողներից պահանջում է ճիշտ ձևակերպել իրենց մտքերը, համբերատար լսել ընկերների պատասխանները, կարծիքները, հարցապնդումները, հակադրվելու դեպքում բացառել վիրավորանքը: Բանավեճը կարող է լինել ազատ, երբ այն զարգանում է ազատ, և ղեկավարվող, երբ այն զարգանում որոշակի ուղղությամբ: «Զրույց»-այս մեթոդի էությունն այն է, որ աշակերտները պատասխանում են նախօրոքկազմված հարցերին: Այս մեթոդը կիրառվում է նոր նյութի հաղորդման, ամրապնդման,ստուգման ժամանակ:

3. **Խճանկար**- Սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը:

4. **«Վեր- որոնում»-** հետազոտության վրա հիմնված ուսումնական գործունեություն է, որի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ստացվում են ինտերնետային աղբյուրներից՝ կայքեր, հանրագիտարաններ, ուսումնական ռեսուրսներ, գրադարաններ, ֆորումներ: Այս մեթոդով ուսուցումը ենթադրում է ելակետային մի հարցադրում կամ խնդիր, որը գործնական, ոչ թե տեսական պատասխանի կամ լուծման կարիք ունի:

5. **Մտագրոհ-** խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների միջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալուփորձի:Բոլոր մտքերը, հարցերը և գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա: Որից հետո նոր կարող ենք իրականացնել գնահատում:

Եզրակացություն

Ուսումնասիրելով և վեր բարձրացնելով Արցախի ազգային- ազատագրական պայքարի խնդիրները, մեր աշխատանքում փորձել ենք վերլուծել և բացահայտել Արցախում և Հայաստանում կազմակերպված համազգային պայքարի մեջ Հայ ժողովրդի կատարած քայլերը խնդրի լուծման համար։

Թեմայի ուսումնասիրության արդյունքում եզրահանգել ենք մի քանի հիմնական եզրակացությունների.

1. Ուսումնասիրելով արցախահայության անցած ժամանակների պատմությունը համոզվում ենք,որ Ադրբեջանի կողմից իրագործված խտրականությունը իրականացվել է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում ու համայն աշխարհի աչքերի առաջ, և դա էլ նպաստել է, որպեսզի հայ ազգաբնակչությունը դիմի վճռական քայլերի և իր առջև խնդիր դրել վերականգնել պատմական արդարությունը, այն է վերամիավորվել Մայր Հայրենիքի կամ Խարհրդային Հայաստանի հետ։
2. 1985թ Գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքականությունը, որը մեծ հույսեր էր արթնացրել հայ ժողովրդի և արցախահայության մեջ, այդպես էլ մնում է երազանք, քանի որ Մոսկվան ո՛չ մի քայլ չձեռնարկեց լուծումներ տալ Արցախյան հարցին։ Դա էր պատճառը, որ հայ ժողովուրդը ոտքի կանգնեց իր հայրենիքի փրկության համար։
3. Գոյապայքարի այս նոր փուլում մարդիկ ճաշակել են ադրբեջանական կառավարության կողմից իրականացված բոլոր տեսակի դաժանությունները։
4. Համազգային պայքարը ճնշելու նպատակով Ադրբեջանի կողմից իրականացվեցին բռնություններ և կոտորածներ այն տարածքներում, որտեղ բնակվում էին հայեր / Սումգայիթ, Բաքու/ ։
5. Թուրթ- ադրբեջանական լրատվամիջոցներում և թերթերում շարժումը որակվում էր որպես անհնազանդություն ադրբեջանական կառավարությանը, և այդ ամենի շնորհիվ Ադրբեջանից պատմաբանները կեղծում էին փաստերը և ԼՂԻՄ-ը ներկայացնում, որպես իրենց երկրի մաս, որը եղել է իրենց նախնիների հայրենիքը։

6. 1988թ իրադարձությունների հորձանուտում ծնված ինքնապաշտպանության գաղափարը զարգացող դեպքերի ճնշմամբ աստիճանաբար դարձավ առարկայական անհրաժեշտություն: ԼՂՀ սահմանների ու խաղաղ բնակավայրերի վրա մշտական սպառնալիքը, հոթիռահրետանակոծությունները և ինքնապաշտպանական ուժերի մարտավարական խնդիրները լուծելու համար պահանջում էին վնասաղերծել հակառակորդի կրակակետերը և հանրապետության շուրջ ստեղծել անվտանգության գոտի:

7. ԼՂՀ հռչակումը մեծ դեր խաղաց հայ ժողովրդի կյանքում և նոր փառավոր էջ բացվեց Հայ պատմագրության մեջ: Անկախացումից հետո Ադրբեջանի կառավարությունը քայլեր էր կատարում բանակցությունների գնալու համար:

8. Սկսված բանակցությունները առայժմ շոշափելի արդյունքներ չեն տվել Ադրբեջանի կողմից ոչ կառուցողական քաղաքականության պատճառով:

9. Ադրբեջանը չհամակերպվելով պատերազմի արդյունքում հաստատված իրողության հետ, մինչև այսօր շոշափում է հայ ազատամարտիկների արյամբ գծված սահմանային հարցը, այն դեպքում, երբ այդ պատերազմը և ԼՂՀ-ի դեմ ագրեսիան նախաձեռնողը եղել է հենց ինքը Ադրբեջանը:

Մենք այսօրել հույսեր ունենք, որ մի օր լուծում կստանա Արցախյան հիմնահարցը և այն կլինի ի օգուտ մեր հայ ժողովրդին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. *Ուսումնասիրություններ*

1. Արշակյան Ա., Արցախյան շարժման համաժողովրդական բնույթը /1988թ փետրվար- մարտ/, Երևան, 2002:
2. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000թթ., Երևան, 2003:
3. Աբրահամյան Հ., 1918-1920թթ. Արցախահայության համագումարների ժողովրդավա- րությունը, Երևան, 2012:
4. Բալայան Զ. , Դժոխք և Դրախտ, Երևան, 1995:
5. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը: Երևան, Ամարաս 2002:
6. Բեգլարյան Հ. , Արցախ Նանե, Ղարաբաղյան շարժում, Ստեփանակերտ, 2006:
7. Էլբակյան Է., Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները, «1988-1994»թթ., Երևան, 2015 :
8. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, 1917-1920թթ,, Երևան, 2008:
9. Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղը 1917-1919թթ., Երևան, 1996:
10. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996:
11. Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000,
12. Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն, Մ.Ա. Հարությունյան., Երևան, 2000:
13. ՀՀ ԱԳՆ հայտարարությունը, Արցախի Շահումյանի շրջանի օկուպացիայի 28-րդ տարելիցի կապակցությամբ 13 հունիսի, 2020:
14. Հասրաթյան Ս., Գոյամարտ «ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ակնարկ» Ք. Ստեփանակերտ, 1988:
15. Հասրաթյան Ս., Մարտնցում ՊԲ կենտրոնական պաշտպանական շրջանի մարտական ուղղու համառոտ պատմություն:
16. Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը եվ պետական շինարարության գործնթացը 1991-1994:
17. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994 գլխավոր խմբ. Հ. Այվազյան, Երևան, 2004:
18. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն Երևան, 2013:
19. Մինասյան Է., հայոց նորագույն պետականության քառորդ դարը 1991-2017, ԵՊՀ հրատ., Երևան, 2018:
20. Մինասյան Է., Արցախյան Ազատամարտի Պատմության Ուսումնասիրության արդի վիճակն ու խնդիրները:
21. Մանասարյան Ն., Ինչպե՞ս գոյացավ Արցախյան վակումը, «Երեկոյան Երևան», 1989թ., դեկտեմբերի 23, թիվ 295:

22. Ջուլհակյան Դ., ԱսատրյանԿ., Արցախյան պատերազմը 1991-1994թթ և նրա արժեվորումը հայ պատմագրության կողմից http://publications.ysu.am/wp-content/uploads/2017/09/D.-Julhakian.pdf :
23. Սարգսյան Լ., Արցախյան շարժման լուսաբանումը թուրք- ադրբեջանական լրատվամիջոցներում, «Հայոց պատմության հարցերը» ԳԱԱ հրատ., Երևան, 2002:
24. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
25. Ուլուբաբյան Լ., Արցախյան շարժումը և հայ- ռուսական հարաբերությունները 1998- 1990թթ., «Լրաբեր» , հաս. գիտ., Երևան, 2000:
26. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը / սկզբից մինչև մեր օրերը/, Երևան, 1994:
27. Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրություն Երևան, 2012:

Բ. ***Մեթոդական գրականություն***

1. Եփրիկայն Ա., Ստեփանյան Խ., Գրիգորյան Հ., «Պատմություն» մասնագիտության ուսանողների մանկավարժական պրակտիկայի կազմակերպումը, Երևան, 2018:
2. Պապոյան Հ. , Պատմության դասավանդման մեթոդիկան, Երևան, 2013:0